

ՋԻՆՈՒՈՐԱԿԱՆ ՕՐԷՆՍԴՐԱԿԱՆ ՄՇԱԿՈՅԹԸ ՀԱՅ ԻՐԱՒՈՒՆՔԻ ԱՂԲԻԻՐՆԵՐՈՒՄ

Արցախեան ապրիլեան հերոսամարտի օրերին օրինաչափ ու հրատապ դարձաւ պատերազմի եւ խաղաղութեան համընդհանուր հիմնահարցի վերաիմաստաւորումը՝ ազգային-պատմական, փիլիսոփայական, իրաւական, ռազմագիտական, քաղաքական, դիւանագիտական եւ այլ դիտանկիւններից: Ի հակադրութիւն թուրք-ադրբեջանական հափշտակիչ, ցեղասպան քաղաքականութեան ու բարբարոսութեան՝ հայ պաշտօնական եւ հասարակական շրջանակներում առաւել կարեւորւում են ազգային ինքնորոշման, պետական անվտանգութեան, Հայաստանի սահմանների անխախտելիութեան սկզբունքները՝ հաշուի առնելով խնդրի լուծման ոչ միայն ռազմաքաղաքական, այլեւ քաղաքական-մարդասիրական գործօնները: Այս համատեքստում արդիական է մարդու գործօնի փաստարկումը՝ հայ իրաւունքի աղբիւրներում սահմանուած զինուորական օրէնքներում:

Հայ իրաւունքի պատմութիւնը ազգի մշակութային-քաղաքակրթական պատմութեան կարեւոր քաղադրիչներից է: Հայրենիքի ռազմաքաղաքական պաշտպանութեան, պետութեան եւ ազգի անվտանգութեան, ազատութեան ու անկախութեան գաղափարներն արտացոլուել են դեռեւս հայ սովորութային իրաւունքում, հնագոյն արձանագրութիւններում, թագաւորական հրամանագրերում, զօրանամակներում ու նախարարական իրաւակարգերում: Սպարապետութիւնը միշտ համարուել է հայոց պետութեան կառավարման համակարգի կենտրոնական գերատեսչութիւններից մէկը, որն իրականացրել է երկրի զինուած ուժերի կազմակերպման եւ պատերազմի ժամանակ ղեկավարման գործառույթներ: Պետականութեան կորստից (428 թուականից) յետոյ Հայաստանում իրաւայարաբերութիւնները կարգաւորուել են նախարարական իրաւունքի կանոններով, աւելի ուշ՝ նաեւ «Կանոնագիրք Հայոց» ժողովածուի սահմանադրոյթներով: Թէ՛ նախարար-

րական իրաւունքը, թէ՛ Կանոնական իրաւունքը նշանակալի դեր են ունեցել՝ պահպանելու ազգի կեցութային հիմքերը եւ զարգացնելու հայոց ինքնակառավարման ունակութիւնն ու իրաւական միտքը: Իրաւական այս մշակոյթը դարձել է նաեւ աշխարհիկ գրաւոր օրէնսդրութեան հիմք:

Հայ ժողովրդի իրաւագիտացութիւնն այնքան բարձր է եղել, որ զգացել է աշխարհիկ-ֆաղափական ու գիմուրական օրէնքների անհրաժեշտութիւնը՝ յանուն ազգային-դատաւարական իմքնութեան: Յայտնի է, որ մահմեդական տիրակալները քրիստոնեաների ներքին գործերը չէին քննում իրենց օրէնսդրութեամբ: Ներսէս Լամբրոնացու վկայութեամբ՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս Գրիգոր Դ. Տղայի (1173-1193) օրօք քաղաքների ու գաւառների բնակիչները Նորին Սրբազնութիւնից աշխարհիկ օրէնքներ խընդրեցին, սակայն ո՛չ եկեղեցիներում, ո՛չ էլ իշխանների մօտ, չգտնուեցին այդպիսի օրէնքներ, «...քայց միայն զկանոնականս՝ որ ի սուրբ հարցն ժողովեցոց էր գրեալ... Իսկ ֆաղափ աւրեմս ոչ գտաւ ի մէջ Հայոց»: Կաթողիկոսական պահոցներում եղել են միայն կանոնական օրէնքներ: Մխիթար Գօշի, Ներսէս Շնորհալու, Ներսէս Լամբրոնացու, Սմբատ Սպարապետի ջանքերով ստեղծուեցին հայ իրաւունքի նոր աղբիւրներ, ինչպէս նաեւ փոխառուեցին ու ստեղծագործաբար վերախմբագրուեցին օտար որոշ օրէնագրքեր՝ դրանք յարմարեցուելով հայոց երկրի առանձնայատկութիւններին, ազգային-քաղաքական ու ռազմական պահանջներին:

Միջնադարի հայ իրաւագէտների օրէնսդրական գործունէութեան հիմքում Հայաստանի իմքնիշխան, կեցութեան պետականութեան գաղափարն էր, որի իրականացումը ենթադրում էր մի շարք հիմնահարցերի լուծում: Ներազգային ուժերի համախմբում, կազմալուծուած զինուած ուժերի միաւորում, ազգային բանակի վերաստեղծում, տեղական իշխանութիւնների համագործակցում, անջատողական-կենտրոնախոյս քաղաքականութեան չեզոքացում, ընկերային ներդաշնակութեան հաստատում, հոգեւոր-բարոյական գաղափարախօսութեան ծաւալում եւ այլն: Հայ մտածողները մշակել են ազգի իմքնիշխանութեան եւ պետութեան իմքնիշխանութեան (ազգային իշխանութեան գերակայութեան) ուրոյն հայեցակարգ, որ համապատասխանում էր հայ ժողովրդի

1 Քաղաքային Օրէնք՝ Ներսիսի Լամբրոնացոյ ըստ Կոստանդիանոսի, Թեոդոսի եւ Լեւոնի թագաւորաց Հռովմայեցոց, ի «Բանասէր», Փարիզ 1907, 5:

ազգային-ազատագրական պայքարի արդարացիութիւնը հիմնաւորող ազգային գաղափարախօսութեանը:

Աստուածաբան-փիլիսոփայ, օրէնսդէտ, եկեղեցական-քաղաքական գործիչ ՄԽԻԹԱՐ ԳՕՇԻ (շ. 1120-1213) «Գիրք Դատաստանի»² («Դատաստանագիրք Հայոց», 1184) աշխատութիւնն աշխարհի հանրաճանաչ օրէնսդրական յուշարձաններից է: Գօշի իրաւունքի փիլիսոփայութեան ելակէտը մարդու հիմնախնդիրն է, գլխաւոր սկզբունքները՝ արդարադատութիւնն ու իիստ օրէնքների մարդկայնացումը: Հէնց Դատաստանագրքի Նախադրութեան մէջ հաստատելով, որ «...արդարն ընտրելն ի սկզբանէ բնական յատկանիշ է մեզանում»³, նա յիշեցնում է որ Աւետարանը բնական ու Մովսիսական օրէնքների լրացումն է եւ առաւել է, քան Օրէնքը: Ուստի՝ բաւարար է, որ «Օրէնքներն ու Աւետարանը որպէս սերմ լինեն մեր հոգիներում, որոնցով եւ դատարանում "արժանի դատեր վարենք»⁴:

Այդպէս՝ դրական (մարդկային) օրէնսդրութեան նկատմամբ աստուածային ու բնական օրէնքների եւ քրիստոնէական սկզբունքների գերակայութեան ընդգծումը Գօշի հայեցակարգում գիտամեթոդական կարեւոր հենք է՝ հակադրուելու եւ քննադատելու օտար օրէնսդրութիւնները, աստուածային կամքից բխեցնելու ազգային օրինաստեղծման անհրաժեշտութիւնը եւ պաշտպանելու ազգային իրաւունքները: Նա շեշտում է նաեւ օրէնքների դաստիարակչական նշանակութիւնը՝ կարեւորելով այն փաստը, որ աշխարհիկ կանոնները, ինչպէս աստուածային օրէնքները, «...նպատակ ունեն ազատել մարդկանց մեղքերից... խափանելու չարը, որպէսզի համամտութեամբ եւ համակրանքով ապրենք միմեանց հետ»⁵:

Դատաստանագրքի ստեղծումը պայմանաւորուած էր տուեալ պատմաշրջանի հրամայական պահանջով: Բուն Հայաստանում եւ Կիլիկիայում հայ ժողովուրդը մղում էր ազգային-ազատագրական՝ պայքար՝ յանուն քաղաքական անկախութեան ու պետականութեան վերականգնման: Մ. Գօշի գլխաւոր նպատակն էր՝

2 ՄԽԻԹԱՐ ԳՕՇ, Գիրք Դատաստանի, ԹՈՐՈՍԵԱՆԻ, Խ., (աշխտ.), Երեւան 1975:

3 Ա.Ի.Ա.ԳԵԱՆ Ռ., Հայ իրաւական մտքի զանաւարան, Յաւելուած X, Մխթար Գօշի «Դատաստանագիրք Հայոցը», Երեւան 2001, 360:

4 Անդ, 361:

5 Անդ, 366:

ազգային գաղափարախօսութեամբ սատարել հայ ժողովրդի ազատագրական պայքարին եւ իրաւական հիմք նախապատրաստել պետականութեան լինելիութեան համար: Միտուած լինելով համազգային շահերին՝ Դատաստանագիրքը նպաստում էր հայ ժողովրդի ինքնապահպանման ու քաղաքական ինքնորոշման գործին:

Գօշը երկրի անկախութիւնը պատկերացնում էր ուժեղ, ինքնիշխան պետականութեամբ, որ կապւում էր պետութեան գլխի՝ թագաւորի անձի հետ: Թէեւ նա սահմանում է թագաւորի՝ որպէս գերիշխանի բացառիկ իրաւունքները, բայցեւ կարելի է նրա մարդկային-հումանիստական որակները՝ կոչ անելով գերծ մնալ բռնութիւններից ոչ միայն հայերի, այլեւ օտարազգի անձանց նկատմամբ: Մասնաւորապէս՝ Դատաստանագրքում պատուիւրում է, որ այլազգիների հետ պատերազմի ակարտից յետոյ թագաւորը «...սպանութիւններ չամի, այլ միայն պատերազմի պատճառ [հանդիսացող] այլազգիներին [սպանի]»: Եթէ օտար երկիր պաշարի, պէտք է «...մախ խաղաղութեան կոչ անի մէկ, երկու, երեք անգամ», բայց եթէ դիմադրութիւն լինի, «...դիմադիրներին սպանելով՝ միւսներին հարկատու դարձնի: Իսկ եթէ անձնատուր լինեն՝ այլ բաներով հարկատու լինեն, բայց ո՛չ գլխով»⁶:

Ըստ օրէնքի՝ պետութեան եւ իշխանութեան դէմ ծանրագոյն յանցագործութիւն են համարւում դաւաճանութիւնը, լրտեսութիւնը, քաղաքներն ու բերդերը թշնամուն յանձնելը, մատնութիւնը: Նման դէպքերում Գօշը սահմանում է մահապատիժ, եթէ յանցագործն այլազգի է, եւ յանցանքն ապացուցուած է: Նա թագաւորին իրաւունք է վերապահում՝ սպանելու կամ ներելու իր հայեցողութեամբ. «Եթէ յարմար գտնի [մատնողի] անձը պահպանել՝ [նրա] կնոջն ու զաւակներին արքունիք վերցնելով՝ վաճառի եւ ժառանգութիւնից զրկի, որպէսզի ակնառու իրատ լինի»: Քրիստոնեաների համար եւս նախատեսուած է մահապատիժ: Բայց այս պարագայում նա թագաւորին յորդորում է. «...յառնու մեր օրէնքների մարդասիրութեամբ իրատի այս կամ այն ձեւով, որպէսզի ապաշխարութեան հասնի եւ չկորչի՝ [անկախ նրանից] ի կատար ածուել է չարութիւնը, թէ ոչ (ընդգծումը - Լ.Ս.)»⁷: Այդպէս՝ բարձրագոյն պատիժ սահմանելով պետութեան դէմ յանցագործու-

6 Ամդ, 394:

7 Ամդ:

Թիւնների դէպքում Գօշը միաժամանակ թագաւորից ներողամտութիւն է հայցում, յատկապէս՝ քրիստոնեաների համար:

Հասկանալով, որ Հայաստանի քաղաքական վիճակի պատճառներից են երկրի գինուած ուժերի ցրուածութիւնն ու իշխանների՝ իրենց գաւառներում ներփակուելը, Գօշը քննադատում է այն իշխաններին, ովքեր անջատամտութեամբ «...լաւ համարէին ի ստրկութեան կալ ամենայն ազգաց, քան թէ հնազանդել միմեանց եւ կեալ յազատութեան»⁸: Նա փորձում էր իրաւական հարթութեան վրայ լուծել իշխանների կենտրոնախոյս ձգտումները չէզոքացնելու խնդիրը, ինչն այդ ժամանակ հնարաւոր էր միայն ստորակարգութեան սկզբունքով: Օրինակ՝ պատերազմի ժամանակ գլխաւոր աւարը՝ ոսկին, արքայինն է, իսկ «...արծաթը իշխաններին լինի, պղինձը, երկաթը եւ այլն՝ զօրքին»: Գերիների ու աւարի կէսը թագաւորինն է, «...միւս կէսը՝ զօրքինն է»: Թագաւորն ու իշխանները պարտաւոր են տասանորդ տալ եկեղեցուն⁹:

Ըստ Դատաստանագրքի՝ թագաւորի իշխանութիւնն անսահմանափակ չէ, եւ նրա անձը նոյնպէս դատապարտելի է օրէնքներով. «Եթէ անիրաժեշտ լինի թագաւորին պատժել՝ երկրի խաղաղութեան պահպանման համար, պէտք է դա արուի մէկ այլ թագաւորի եւ հայրապետի կամքով ու ամենայն արդարութեամբ»: Գօշը գահընկեցութեան իրաւունք ժողովրդի համար չի սահմանում, ինչն այդ ժամանակ կարող էր յանգեցնել ներազգային խռովութիւնների, իսկ նրա նպատակը ազգային միասնութեան հաստատումն էր: Բայցեւ չի ընդունում անօրինական դատաստանները: Ըստ օրէնքի՝ ազատներն իրաւումն չունեն պատժել գինուորներին, քանզի «...պատժելը իշխանների իրաւասութիւնն է»: Նմանապէս՝ «...գինուորներն իրաւումն չունեն գիւղացիներին աքաղել կամ պատժել. աքաղել կարող են ազնուականները, պատժել՝ իշխանները»¹⁰: Հետեւաբար՝ արգելւում են գինուորների բռնութիւնները եւ կամայական պատիժները խաղաղ բնակչութեան շրջանակներում:

Գօշի Դատաստանագրքում պատերազմին ու գինուորական ծառայութեանն առնչւում են նաեւ ընտանեկան եւ ֆրէական իրաւունքի մի շարք կանոններ: Օրինակ՝ եթէ ամուսինը պատերազմի

8 Հայոց նոր վկաները, ՄԱՆԱՆԴԵԱՆ, Հ. - ԱՅԱՌԵԱՆ, Հ., (աշխ.), Վաղարշապատ 1903, 24:

9 ԱԻԱԳԵԱՆ Ռ., նշ. աշխ., 395-396:

10 Անդ, 514:

մասնակից է, կինն իրաւունք չունի ամուսնանալ: Նոյնիսկ ամուսնու մահուան լուրը ստանալուց եւ այն ստուգելուց յետոյ կինը պէտք է սպասի եօթ տարի, ապա «...համոզուած ամուսնու մահուան [իսկութեամբ]՝ ամուսնանայ, եւ եթէ ամուսինը վերադառնայ՝ չառնի կնոջը»: Այս դէպքում կրկին ամուսնութեան իրաւունք ունի միայն կինը, իսկ «...վերադարձած ամուսինը չունի նոր պսակի իրաւունք»¹¹: Եօթ տարուայ սպասման պայմանը վերաբերում է նաեւ գերութեան մէջ գտնուող զուգակցի ամուսնուն: Եթէ կինն է գերութեան տարուել, պէտք է փրկազնուի ամուսնու եւ ծնողների կողմից: Բայց եթէ եօթնամեայ ժամկետը լրանալուց յետոյ գերուածը (կինը կամ ամուսինը) չի վերադառնում կամ ազատւում փրկազնով, դադարում է ամուսնական կապը, եւ սպասողը իրաւունք ունի կրկին ամուսնանալ¹²:

Հարկ է նշել, որ եօթ տարուայ սպասման պայմանը կանոնակարգ է, այն սահմանուել է Դուինի Դ. ժողովում (645): Ըստ է. կանոնի՝ անօրինական է հայոց աշխարհի թշնամիներից գերուած կանանց կամ տղամարդկանց ամուսինների կրկնամուսնութիւնը՝ «...առանց վարդապետին հրամանի»: Այդ անօրէնների համար սահմանուում է. «...յառաջ քան զէ. ամն (7 տարի - Լ.Ս.) մինչ գուգակիցն ի գերութեան էր եւ նոքա յանդգնութեամբ այլ ամուսին առին, այնպիսեացն ամուսնութիւնն ի պոռնկութիւն է. ե՛ւ գան ե՛ւ պատուհաս կրեսցեն»: Որպէս պատիժ՝ նախատեսուում են մեղաւորների ունեցուածքի բռնագրաւում եւ աղքատներին բաշխում, ինչպէս նաեւ եօթ տարի ապաշխարում: Իսկ ուլքեր համբերում են եօթ տարի, եւ ամուսինները չեն վերադառնում, կարող են ամուսնանալ՝ «...առանց տուգանքի եւ պատուհասի, եւ կրկին ապաշխարութիւն ի վերայ եղիցի»¹³:

Քրէական իրաւանկանոններում մեկնաբանելով մեղքի տեսակները՝ Գօշը բացատրում է, որ «...պատերազմի մէջ սպանութիւններ կատարւում են ե՛ւ կամաւոր, ե՛ւ ակամայ»: Օրինակ՝ երբ մէկը մթութեան մէջ կարծում է, թէ թշնամու է հարուածում, բայց զարկելով՝ սպանում է իր բարեկամին: Սա «խառը» սպանութիւն է՝ կատարուած ե՛ւ կամաւոր, ե՛ւ ակամայ: Դիտաւորեալ է, որովհետեւ կամենում էր սպանել թշնամուն, ակամայ, քանզի չիմանալով՝ սպանեց բարեկամին: Կամ՝ «Եթէ մէկը նետ է արձա-

11 Անդ, 408:

12 Անդ, 405:

13 ՅԱԿՈԲԵԱՆ, Վ., (աշխտ.), Կանոնագիրք Հայոց, Կանոնք Դըւնայ Սուրբ Ժողովոյն, Կանոն է., հտ. Բ., Նրեւան 1971, 206:

կում, որ թշնամում պատահելով՝ սպանում է նրան. այս սպանութիւնը կամաւոր է ու նաեւ ակամայ»¹⁴: Նման դէպքերում, ինչպէս ինքնապաշտպանութեան ժամանակ թշնամուն վնասազերծելիս խիստ պատիժներ չեն սահմանւում, բայց պարտադիր է ապաշխարանքը՝ յանուն հոգու մաքրագործման:

Այդպէս՝ Գօշը հնարաւորինս մեղմացնում էր պատիժները՝ ըստ կատարուած յանցագործութեան ծանրութեան աստիճանի, բայց խիստ դատապարտում էր մահմեդականներին՝ հայերի նկատմամբ բռնութիւնների պատճառով:

Զինուորական օրէնսդրական մշակոյթն արտացոլուած է նաեւ աստուածաբան, փիլիսոփայ, բանաստեղծ, եկեղեցական-քաղաքական գործիչ ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻԻ (Ներսէս Դ. Կլայեցի, 1101/1102-1173) «Թուղթ Ընդհանրական»-ում: 1166 Ապրիլի 17ին ընտրուելով Ամենայն Հայոց Կաթողիկոս՝ Շնորհալին իր հայրապետական գործունէութիւնը սկսեց ողջ հայ ազգին յղուած գրաւոր խօսքով: Դա Ներսէսի առաջին Կոնդակն է¹⁵, որը հոգեւոր-բարոյական, իրաւական ու ռազմաքաղաքական նշանակութեամբ արժեւորուել է որպէս ինքնատիպ աշխատութիւն:

«Թուղթ Ընդհանրական»-ում սահմանուած խրատականոնների հիմքում ազգի ինքնիշխանութեան, կենտրոնացուած պետականութեան, մարդու կամքի ազատութեան, բնական իրաւունքների անօտարելիութեան եւ բարոյական կատարելագործման գաղափարներն են: Աշխատութեան «Նախաբան»-ում Շնորհալին դիմում է ողջ աշխարհի հայերին՝ խնդրելով «...քանզի գականջս մտաց ձերոց յունկնդրութիւն աստուածային քանիցս այսոցիկ... որպէս զի առաջնորդեալ մեւք ի շաւիղս արդարութեան՝ արժանի եղիցի իւրաքանչիւր ոք ի ձեռք՝ միոյ օթեւանաց տան Հօրն երկնաւորի լինել ժառանգաւոր»¹⁶: Ըստ նրա՝ հասարակութեան մէջ արմատաւորուած չարիքները պայմանաւորուած են հայ ազգի քաղաքական կեցութեամբ՝ «քազմիշխանութեամբ», կենտրոնացուած իշխանութեան բացակայութեամբ. «Եւ քաղաք քազաւորական եւ քազմածողով ոչ գոյ ազգի մերում, որպէս զի անդամօր մստելով յաթոռ հայրապետութեան... ուսուցանեալ ժողովրդեան մերում զաստուածային պատուիրանս ըստ առաջին հայրապետաց»¹⁷,

14 Ա.Լ.Ա.ԳԵԱՆ Ռ., մշ. աշխ., 518:

15 Թուղթ Ընդհանրական Տ. Ներսիսի Կաթողիկոսի Հայոց, ի տպարանի Առաքելական Աթոռոյ Սրբոյ Յակովբեանց, Երուսաղէմ 1871, 1-83:

16 Անդ, 2:

17 Անդ, 6-7:

«Թուղթ Ընդհանրականի» վեցերորդ գլխի խրատականոններն ուղղորտած են զինուորների դասին: Զինուորականութիւնը ժ.Բ. դարում յարգուած ու արտօնեալ դաս էր եւ հասարակական-քաղաքական կեանքում ունէր կարեւոր դեր: Զինուորները ենթակայ էին ազգային իշխանութեան, ուստի՝ պէտք է հնազանդուէին նրան: Այնուհանդերձ՝ գաւառների եւ զօրքերի տէր իշխաններին Շնորհալին պատուիրում է առանձնակի ուշադիր լինել երկրի պահապան-գիւնտընների նկատմամբ, չնուազեցնել նրանց թոշակը, քանզի մեծ անիրաւութիւն է դա՝ նրանց «քափած արեան համար»: Բացառել բռնութիւնները զինուորների հանդէպ, որպէսզի պատիժ կրելու վախից չփախչեն, այլ «...հաւատարմութեամբ ծառայեցնել ձեզ եւ առանց մեղաւորեալի»¹⁸: Նա պաշտպանում է տիրոջից զինուորների հեռանալու իրաւունքը՝ իշխաններին յորդորելով նրանց համոզել ծառայել կամովի եւ ոչ պարտադրանքով:

Միաժամանակ օրէնսգէտը զինուորներին յորդորում է ազնուօրէն ու արիաբար ծառայել՝ պատուիրելով չմոռանալ մարդասիրական սկզբունքները. «Մի՛ առ ակամէ ծառայել որպէս մարդահանոյժ, այլ միամտութեամբ սրտիւ՝ որպէս Աստուծոյ»: Հաւատարիմ ծառայելիս զինուորները հատուցում են, իսկ տիրոջ անձի, նրա ամրոցի կամ ունեցուածքի նկատմամբ ոտնձգութեան դէպքում, ինչն անարգանք է Աստծոյ դէմ, «...յԱստուծոյ ընդունելոց է զվրէժ հատուցման չարեաց իւրոց»¹⁹: Քրիստոնեայ իշխաններին՝ զինուորները պարտաւոր են անվերապահ հաւատարմութեամբ ու սիրով նուիրուել: Իսկ եթէ «ի քրիստոնէից ոք ընդ այլազգւոյ է իշխանութեամբ, եւ ի նորին պարգեւաց կերակրի եւ զգեմու, նոյն հաւատարմութիւն պարտ է ցուցանել նմա, եւ զառանց մեղաւորեալ ծառայութիւն»²⁰: Զինուորները նաեւ պարտաւոր են արդարութեամբ ու իրաւացի վարուել հնազանդ հպատակների հետ, բռնութիւնների ու կտտանքների չենթարկեն նրանց՝ «օրիմօք դահեաց»:

Ըստ Շնորհալու՝ գիւնտընութիւնը պատեալ չէ՝ արեամարիելու Աստծոյ պատուիրանները, անհնազանդ լինելու հոգեւոր առաջնորդներին, ովքեր յորդորում են. պահպանել սուրբ կանոններն ու աւանդոյթները, չկողոպտել աղքատներին, «ամմեղ արիւն» չհեղել: Քանզի եթէ պատերազմի ժամանակ սպանութիւն-

18 Ամդ, 75:

19 Ամդ, 77:

20 Ամդ, 77-78:

ները թագաւորի հրամանով են լինում, ու դրանց պատասխանատուն նա է, ապա խաղաղ բնակչութեան դէմ գործած բոլոր մեղքերի համար պատասխանատու են զինուորները: Այս դէպքում «ամենեցուն համարս պահանջելոյ է ի ձեռն Աստուած՝ ծանր եւ անաչառ դատաստանաւ»²¹: Մտածողը պատուիրում է զինուորներին. «առաւել քան մարմնական զինու՛ք՝ հաւատոյ զինովն վառեցարու՛ք», այսինքն՝ սպառազինուել աղօթքով, աստուածապաշտութեամբ, արդարութեամբ եւ հանդուրժողութեամբ, «որպէս զի Աստուած լիցի ախոյեան ի պատերազմունսն, եւ զթշնամիսն վանեսցէ առաջի ձեր»²²:

Այդպէս՝ Ներսէս Շնորհալին, հռչակելով երկրի ռազմական պաշտպանութիւնն իրականացնող զինուորների իրաւունքները, նրանց յորդորում է հայրենիքին ծառայել աստուածային օրէնքների ու մարդասիրական սկզբունքների համաձայն:

Բացի ազգային օրէնսդրական գործընթացից, հայ գործիչները փոխառել ու թարգմանաբար գործադրել են օտար որոշ օրէնսգրքեր, այդ թւում՝ զինուորական կանոններ: Այս առումով նշանակալի է Կիլիկեան Հայկական պետութեան եկեղեցական-քաղաքական ականաւոր գործիչ, փիլիսոփայ, իրաւագէտ ՆԵՐՍԷՍ ԼԱՄԱՐՈՆԱՑԻԻ (1153-1198) գործունէութիւնը:

Ելնելով հայոց թագաւորութեան վերականգնման եւ ազգային բանակի կայացման նպատակներից՝ Լամբրոնացին, ինչպէս Մ. Գօշը, ժամանակի առաջնային խնդիրներից էր համարում օրէնսգրքերի ստեղծումը: Բայց եթէ վերջինս ստեղծեց ազգային Դատաստանագիրք, Լամբրոնացին գերադասեց թարգմանել ու հայ իրականութեանը համապատասխան՝ խմբագրել յունա-բիւզանդական օրէնքների ժողովածուները, այդ թւում՝ «Ջինուորական օրէնքները» (1196): Այս իրողութիւնը վկայում է հէնց ինքը՝ թարգմանիչ-օրէնսդիրը. «Ի հելլենացոց գրոց արարի թարգմանութիւն մովսիսական արիմացդ եւ Լեւոնի եւ Կոստանդեայ արիմացդ, ի մմանէ թարգմանցի եւ զգինուորական արեմքդ. եւ ընծայեցի որոց սիրեմն վարիլ սովաւ եւ հաճոյ գտամիլ Աստուծոյ, եւ կառավարիչ՝ քաղաքաց եւ գաւառաց»²³:

Ըստ Լամբրոնացու՝ պէտք է ժամանակի գործօնը հաշուի առնելով գնահատել իրադարձութիւններն ու օրէնքները: Այս

21 Ամդ, 78:

22 Ամդ, 79:

23 Քաղաքային Օրէնք՝ Ներսիսի Լամբրոնացոյ ըստ Կոստանդիանոսի, Թէոդոսի եւ Լեւոնի թագաւորաց Հռովմայեցոց, Փարիզ 1907, 5:

մեկնակէտից նա խաղաղութիւնը գերադասում է պատերազմից՝ բացատրելով, որ խաղաղութեան սկզբունքը կիրառելի է միայն այն պետութիւնների նկատմամբ, որոնք նոյնպէս ձգտում են խաղաղութեան: Միջպետական յարաբերութիւններում խաղաղութեան քաղաքականութիւնը գերազոյց արժէ է եւ օրէնք: Բայց եթէ թշնամական պետութիւնները խախտում են այս օրէնքը, անհրաժեշտ է պատերազմել: Այդպէս՝ Լամբրոնացին պաշտպանում է արդարացի պատերազմի սկզբունքը՝ յանուն ինքնապաշտպանութեան:

«Զինուորական օրէնքների»²⁴ ժողովածուն բաղկացած է 57 յօդուածից: օրէնքները կիրառուել են Հին Հռոմում, աւելի ուշ՝ ներառուելով Յուստինիանոսի 533ին հրապարակած օրէնքների ժողովածուի մէջ («Դիգեստներ», Գիրք 49, 16-18 տիտղոսներ՝ զինուորական գործի մասին)²⁵: Ը.-թ. դարերին զինուորական օրէնքները կազմել են «էկլոգայի»²⁶ երրորդ յաւելուածը եւ կիրառուել ոչ միայն Բիւզանդիայում, այլեւ Կիլիկիայում՝ մինչեւ հայկական պետականութեան կազմալուծումը:

Զինուորական օրէնքները Լամբրոնացին թարգմանել է յունարէն բնագրից՝ նպատակ ունենալով ստեղծել հայոց պետութեան քաղաքական ամրապնդող զինուորական սահմանադրութիւն: Այն գործադրուել է Լեւոն Բ. Թագաւորի հաւանութեամբ: Կիլիկեան հայաստանում զինուորական օրէնագիրքը կարգաւորում էր զինուորական ծառայութիւնը՝ սահմանելով ծառայութեան ժամկէտը, հրամանատարական կազմը, զօրամիաւորումների տեսակները, զինծառայողների իրաւունքներն ու պարտականութիւնները: Օրէնսգրքում առկայ են քրէաիրաւական բազում կանոններ, որոնցում դատապարտում են զինուորների օրինախախտումները (դաւաճանութիւն, լրտեսութիւն, զինուորական գաղտնիքի հրա-

24 Զինուորական Օրէնք՝ Ներսիսի Լամբրոնացու, ի Բանասէր, Պարիս 1902, Թիւ 11, 321-328: Աշխարհաբար թարգմ. տես՝ ՆԵՐՍԷՍ ԼԱՄԲՐՈՆԱՅԻ, Զինուորական Օրէնք, ՄԿՐՏՁԵԱՆ, Վ., (թրգ.), ի Հայ իրաւական մտքի յուշարձաններ, Գիրք IV, Երեւան 2009, 60-68:

25 ՍԱՖԱՐԵԱՆ Գ., Իրաւունքի պատմութեան եւ տեսութեան հիմնահարցեր, Երեւան 2010, 349:

26 Էկլոգա (յուն.՝ ծաղկաբաղ) յունա-բիւզանդական օրէնքների ժողովածու է՝ կազմուած 726 կամ 741 թուականներին: Այն պարունակում է օրէնքների իւրայատուկ ըմտրամի՝ քաղուած Յուստինիանոսի «Corpus juris civilis» ժողովածուից: Մամբրամսան տես՝ Медведев, И.П. Развитие правовой науки Византии, ի Культура Византии., Москва 1969, 216:

պարակում, զինծառայութիւնից խուսափում, անբարոյ արարքներ եւ այլն): Սահմանուած են նաեւ պատիժներ՝ կատարուած յանցագործութիւններին համապատասխան:

Ըստ Օրէնագրքի՝ հրամանատարական կազմը բաղկացած է հնգապետներից, տասնապետներից, հարիւրապետներից եւ իշխաններից (կոմսերից կամ տրիբուններից): Թագաւորը նշանակում էր դուկերին (դքսերին, կոմսերին), դուկերը՝ հազարապետերին, վերջիններս՝ հարիւրապետներին²⁷: Հազարապետը սովորական իշխան էր, իսկ կոմսը՝ մեծապատիւ («նախագլուխ») իշխան: Զինուորների պետերը կոչուել են «վերակացուներ»²⁸, բարձրաստիճան զինուորները՝ «իշխաններ», «գորապետներ» եւ «կոմսեր»²⁹: Գործել են հրամանատարների ընտրովի զինուորական խորհուրդներ: Ըստ օրէնքի՝ աններելի օրինախախտումների համար Եկեղեցու կողմից նշուած զինուորականները չէին կարող ընտրուել խորհրդում: Որք վասն շնութեան եւ կամ վասն այլ անպաշխար գործոց դատապարտին նգովիւք ի սուրբ եկեղեցւոջ՝ զինուորք, ոչ են ընտրեալ զինուորական խորհրդոյն»³⁰:

Զօրքը բաղկացած էր հեծեալ գնդից («միաւորներ») եւ հետեակից: ԼԲ. յօդուածի համաձայն՝ ծառայութիւնը զինուորների համար պայմանագրային է. զինուորն իր կամքով է զինուորագրուում. «...ընծայեաց կամաւ գանձն իւր զինուորել», որ «...գդաշն զինուորելոյն ետ», այսինքն՝ ծառայութեան վերաբերեալ կամաւոր պայմանագիր է կնքել: Զինուորական կանոնադրութեամբ՝ պետերը պարտաւոր են հրահանգաւորել իրենց ստորադրեալներին, օրինակ՝ բացատրել, թէ նրանք ինչ գաղտնիքներ չպէտք է հրապարակեն, այլապէս՝ եթէ զինուորը անտեղեակութեան հետեւանքով գաղտնիք բացայայտի, կը պատժուի նրա վերակացուն. «...իւր վերակացուն պատուհասի վասն այնր, զի ոչ գգուշացոյց գնա ի չասելն»³¹:

Օրէնագրքով՝ զինծառայողների պարտականութիւններն են.

Ա.- Անճնուրաց ծառայել քազաւորին (պետութեանը), պահպանել երկրի սահմանների անճեռնմխելիութիւնը, պետական գաղտնիքները:

27 Զինուորական Օրէնք՝ Ներսիսի Լամբրոնացւոյ, նշ. աշխ., յօդ. Բ.:

28 Անդ, յօդ. Դ.:

29 Անդ, յօդ. Գ., Դ., Զ., Ը., ԺԸ., ԼԶ. եւ այլն:

30 Անդ, յօդ. ԼԱ.:

31 Անդ, յօդ. Գ.:

Այս պարտականութիւնները չկատարողները համարոււմ էին դաւաճաններ: Այսպէս, Թագաւորի դէմ մեղանշողը ենթարկոււմ էր բարձրագոյն պատժի. «Որ ոք մեղիցէ առ թագաւորն, մեռանիցի նշաւակեալ եւ յիշատակ նորա անարգանօք մնասցէ մինչեւ իսպառ»³²: Արքայական տան գիշերային պահապանն իր պահակատեղին լքելու համար դատապարտոււմ էր մահապատժի, իսկ եթէ «...մարդասիրութեան արժանաւորի՝ հարկանեմ զնա... հանեմ ի պատույն»³³: Խիստ պատիժներ են սահմանուած այն զինուորների համար, ովքեր՝

- ա.- դաւաճանաբար հակառակորդների մօտ էին գնում,
- բ.- լրտեսական գործունէութիւն էին ծաւալում ի վնաս պետութեան,
- գ.- ոչ քրիստոնէայ թշնամու կողմն էին անցնում,
- դ.- առեւտուր էին թշնամիների հետ՝ վաճառելով գէնք կամ ռազմական նշանակութիւն ունեցող երկաթէ իրեր³⁴,
- ե.- դաշնակցում էին թշնամիների հետ. «Եթէ ոք խորհի շաղախել ընդ բարբարոսս, կամ դնէ ուխտ ընդ նոսս, ի գլխաւորէն պատուհասի»³⁵:

Բ.- Պահպանել հասարակական կարգն ու բնակչութեան անդորրը:

Խստօրէն պատժոււմ էին խռովութիւն յարուցող զինուորները. «Որ խռովէ զխաղաղութիւն զինուոր, ի գլխաւորէն պատժի»³⁶: Դատապարտելի է նաեւ իշխանատենչութեան մղումով ժողովրդին անօրինական գործողութիւնների մէջ ներքաշելը. «Որ անպատշաճոյ սկիզբն լինի եւ զժողովուրդն ամբոխէ վասն իւր իշխանութիւն յափշտակելոյ, կամ զգլուխն հատանեն, եւ կամ ի գաւառէն տարագրեն»³⁷:

Գ.- Անթերի կատարել զինուորական կարգադրութիւնները, լինել կարգապահ, քաջ եւ պարտաճանաչ:

32 Անդ, յօդ. ԻԱ.:

33 Անդ, յօդ. Ծ.:

34 Անդ, յօդ. ԾԱ., ԾԲ., ԾԳ., ԾԴ.:

35 Անդ, յօդ. ԻԲ.:

36 Անդ, յօդ. Խ.:

37 Անդ, յօդ. ԻԴ.:

Այս պահանջները խախտողները կրում էին վարչական տույժեր, քրեական խիստ պատիժներ կամ պաշտոնազրկում էին. «Եթե ոմ գահմամալ պատուիրանին գանց առնե, ի զինուորութեմէն անկցի»³⁸: Օրինակ, եթէ պայմանագիրը խախտելով՝ զինուորը կրկնակի փախչէր իր իշխանի մօտից, աստիճանազրկում էր, քանզի «...իբրեւ զմատնիչ եղեւ իմքն իւրոյ ազատութեան»³⁹: Վերադասին՝ «նախագլուխ իշխանին» ընդդիմանալու համար զինուորները ենթարկւում էին մարմնական պատիժների, աքսորման կամ պաշտոնազրկման⁴⁰: Բերդը կամ քաղաքը պահպանողները, եթէ հանգստանալու պատրուակով դրանք յանձնէին ուրիշին՝ առանց իշխանի հրամանի, «գլխատութեամբ իրաւամբ դատապարտեսցի»⁴¹:

Ծառայութեան ժամկէտը չլրացած՝ զինուորական ծառայութիւնից խուսափողը եւս անարգ պատժի էր ենթարկւում: Իսկ պատերազմ յայտարարելու ժամանակ դասակից փախչելու կամ վախից իր մարմնի վրայ վէրք առաջացնելու համար ծեծում կամ պաշտոնազրկում էին⁴²: Եթէ զինուորները լքում էին ռազմի դաշտը կամ հրաժարւում մասնակցել պատերազմին, ենթարկւում էին մահապատժի. «...կամ գազանա(ց) զկերակուր տան զնա, կամ զփայտէ կախեսցի»⁴³: Պատերազմի ժամանակ զինուորներին տուն թողնելու համար կոմսերը տուգանւում էին 30 դահեկանով: Պատժից ազատւում էին այն զինուորականները, ովքեր պատերազմի ժամանակ ռազմի դաշտից հեռանում էին՝ թշնամուց խոցուած լինելու պատճառով, քանզի «...ունի զվկայութիւն արութեան ի մարմինն»⁴⁴: Բայցեւ, ըստ ԺԳ. յօդուածի, բանտարկւում էին երկչոտ զինուորները, ովքեր փախչում էին՝ առանց թշնամուց խոցուելու կամ օրինական այլ պատճառի: Օրէնքը դատապարտում է թուլամորթներին՝ ինքնասպանութեան փորձերի համար՝ սահմանելով. «...խայտառակեալ կործանեն ի պատուոյ զինուորութեանցն եւ ի գիտել գլխաւորին, եւս ծանրացուցանէ զպատուհասն»⁴⁵: Պատուազրկուած զօրականն այլեւս իրաւունք չունէր

38 Անդ, յօդ. Ի.:

39 Անդ, յօդ. ԼԲ.:

40 Անդ, յօդ. ԾԷ.:

41 Անդ, յօդ. Թ.:

42 Անդ, յօդ. ԻԳ., ԼԶ. եւ ԽԱ.:

43 Անդ, յօդ. ԻԷ.:

44 Անդ, յօդ. ԺԴ.:

45 Անդ, յօդ. ԼԶ.:

մտնել մարտի դաշտ. «Որ անպատուի որով եւ իցէ պատճառանօք եւ անկանի ի զինուորութեմն, ոչ այլ բնաւ պատուի լինի կարօղ առնուլ, կամ մտանել ի կարգ զինուորութեան»⁴⁶:

Զինակցին սրով վիրաւորելու համար սահմանհաժ է ծանրագոյն պատիժ. «Եթէ հրամայաւ զինուոր զիւր զինուորակիցն սրով հարկանէ, գլխատեսցի»⁴⁷: Իշխանին կամ զինակցին դիտաւորեալ մարմնական վնասուածք պատճառելու համար մեղաւորը հեռացուում է ծառայութիւնից՝ կրելով նաեւ մարմնական ծանր պատիժ⁴⁸: Ըստ օրէնքի՝ դատից եւ պատիժը կրելուց խուսափողն աքսորւում է, եւ այդպիսի յանցաւորներին պատժելու իրաւունքով օժտուած է միայն թագաւորը. «պատուհաս ածեն ի վերայ նորա ըստ կամաց թագաւորին»⁴⁹:

Զինուորական կանոնակարգով խիստ պատժոււմ են նաեւ այն ծնողները, ովքեր պատերազմի ժամանակ խնայում են իրենց զաւակներին՝ նրանց չուղարկելով մարտադաշտ. «Եթէ ոք զիւր որդին ի ժամանակ ցախատուն խնայէ զինուորել ի պատերազմ, աքսորեսցի եւ յընչից իւրոյց զրկեալ խայտառակեսցի»⁵⁰: Փաստօրէն՝ այս դէպքում սահմանուած է եռակի պատիժ. աքսոր, ունեցուածքի բռնագրաւում եւ հրապարակային պարսաւանք:

Դ.- Խաղաղ բնակչութեան նկատմամբ չկատարել քրեօրէն պատժելի արարքներ:

Ըստ օրէնքի՝ եթէ զինուորը նիւթական վնաս հասցնի հարկատուին, կրկնակի կը հատուցի: Իսկ եթէ իշխանը կամ նրա հեծեալը ճանապարհին կամ ճորտ գիւղացու տանը նիւթական վնաս պատճառեն, կը դատուեն եւ կրկնակի կը հատուցեն վնասը⁵¹: Գողութիւն է համարոււմ գտնուած անասունը թաքցնելը եւ տիրոջը չվերադարձնելը: Այս դէպքում պատժոււմ է ոչ միայն մեղաւորը, այլեւ նրա գործակիցը. «...տուծի ինքն եւ իւր խորհրդակիցն որ թագուցին [յանցանքը]»⁵²: Կեղծ դրամներ ծախսելու,

46 Անդ, յոդ. ԻԶ.:

47 Անդ, յոդ. ԼԹ.:

48 Անդ, յոդ. ԽԸ. եւ ԾԶ.:

49 Անդ, յոդ. Լ.:

50 Անդ, յոդ. ԼԳ.:

51 Անդ, յոդ. Ը.:

52 Անդ, յոդ. Ժ.:

զէնք գողանալու ու վաճառելու համար սահմանուած է պաշտօնագրկում եւ ազատագրկում⁵³:

Ե.- Լիմել առաքիմի, թոյլ չտալ զիմուորական պատիւը վարկաքեկոդ արարքներ:

Անբարոյ յարաբերութիւններ, որկրամոլութիւն, գինեմոլութիւն, ազահութիւն՝ արգելուած են զինուորականներին, որոնց համար եկեղեցին նզովում է օրինազանցներին:

Օրինակ՝ «Որք ի վերայ գիմոյ արքեցոդութեան եւ այլ կերակրոց յիմարին եւ մեղանչեմ ի զիմուորացն, կացուցանէ զնոսա գլխաւորն առաջի եւ զպատուհասն թողու, քայց ի զիմուորական կարգէն փոխարկէ զնա»: Այսպիսիք չէին կարող լինել զինուորական խորհրդի անդամ՝ ենթարկուելով անարգանքի⁵⁴: Զինուորն աստիճանագրկում ու պարսաւանքի էր ենթարկում նաեւ իր կնոջ դաւաճանութիւնը հանդուրժելու համար. «Եթէ զիմուորն առ շնութեան կնոջ իւրոյ համաձայնի, ի քաց կացցէ ի զիմուորութեանն եւ խայտառակեմ զնա. եւ որ զայլոց ամուսին ապականէ, թէ հաճութեամբ կնոջն զայս առնէ, զփթն հատանեն»⁵⁵:

Այդպէս՝ «Զիմուորական օրէնքները» կարեւոր իրաւական փաստաթուղթ էր՝ իրականացնելու Կիլիկեան Հայկական պետութեան ներքին եւ արտաքին մի շարք կարեւոր գործառնութներ: Օրէնքների թարգմանչի՝ Ներսէս Լամբրոնացու նպատակը ազգային ուժեղ բանակի ստեղծումն էր, զինուորների մէջ հայրենասիրութեան, արիւթեան, պետական իշխանութեան նկատմամբ հաւատարմութեան ոգի ներշնչելը: Այս փաստաթղթի կիրառումը նպաստել է հայոց պետութեան ինքնիշխանութեան ամրապնդմանը, ազգային անվտանգութեան ապահովմանը, ներքին կարգուկանոնի հաստատման ու բարոյական դաստիարակութեան ծաւալմանը: Այն գործադրուել է մինչեւ Սմբատ Սպարապետ (Գունդստաբլ, 1208–1276) ի օրինաստեղծ գործունէութիւնը:

Կիլիկեան Հայկական պետութեան հռչակաւոր սպարապետ, հասարակական-քաղաքական գործիչ, դիւանագէտ, իրաւագէտ, օրէնսդիր, թարգմանիչ եւ պատմիչ Սմբատ Սպարապետի քաղաքական ու ռազմական գործունէութիւնն ընթացել է Հեթումեան արքայատոհմի օրօք: Որպէս զօրավար՝ Սմբատը յայտնի դարձաւ

53 Անդ, յօդ. ԻԷ. եւ ԻԸ.:

54 Անդ, յօդ. ԽԲ.:

55 Անդ, յօդ. ԽԷ.:

Իկոնիայի (1246-1259) եւ Եգիպտոսի (1276) սուլթանների դէմ տարած յաղթանակներով, 1276ի վերջին մարտի ժամանակ նա հերոսաբար զոհուեց: Նրա գլխաւորած հայոց բանակի յաղթանակների շնորհիւ Կիլիկեան Հայաստանում շուրջ 45 տարի համեմատաբար խաղաղ ժամանակաշրջան էր:

Սմբատ Սպարապետի «Դատաստանագիրք»⁵⁶ (1265) մատենանը կազմուել է Կիլիկեան Հայկական թագաւորութիւնում հասարակական-քաղաքական եւ իրաւական յարաբերութիւնները կարգաւորելու նպատակով: Ինչպէս վերոյիշեալ օրէնսդէտների, այնպէս էլ Սմբատի օրէնսդրական գործունէութեան մեկնակէտը աստուածային իրաւունքն է: Դատաստանագրքի առաջաբանում նա գրում է. «Երանելի է անքիծների ցամապարհը, ովքեր առաջնորդւում են Տիրոջ օրէնքներով»⁵⁷: Աստուածային-բնական օրէնքներից են բխում աշխարհիկ-քաղաքական օրէնքները:

Սմբատի Դատաստանագիրքը ներառում է պետական-վարչական, քրէական, քաղաքացիական, ընտանեկան, ինչպէս նաեւ գիմնուրական կանոններ՝ պատերազմի եւ խաղաղութեան, միջազգային յարաբերութիւնների կարգաւորման, ռազմական հիմնահարցերի, զինուորական կարգուկանոնի վերաբերեալ: Զինուորական օրէնքները միահիւսուած են պետավարչական իրաւականոնների հետ:

Ըստ Դատաստանագրքի՝ թագաւորի՝ որպէս ինքնակալ, ինքնիշխան միապետի բացառիկ իրաւունքներից են պետութեան ներկայացումը արտաքին՝ միջազգային յարաբերութիւններում, պատերազմ յայտարարելն ու հաշտութիւն կնքելը, պատժելն ու ներում շնորհելը: Թագաւորին էին պատկանում ռազմական արշաւանքների ընթացքում ձեռք բերուած ամբողջ ոսկին եւ ռազմավարի կէսը: Որոշակի հասոյթ սահմանուած է նաեւ եկեղեցու համար. «Պատշաճ է, որ թագաւորն իր շահած գումարի տասանորդը եկեղեցուն տայ»: Իսկ եթէ նա արշաւանքին չէր մասնակցում, ապա նրան պատկանում էր ռազմավարի 1/10ը եւ ամբողջ ոսկին⁵⁸:

56 Դատաստանագիրք Սմբատ Իշխանի (Գումդստարի), ՂԼՏՃԵԱՆ, Ա., (աշխտ.), Ս. Էջմիածին 1918:

57 ՄՄԲԱՏ ՍՊԱՐԱՊԵՏ, Դատաստանագիրք, Առաջաբան, ԱԻԱԳԵԱՆ, Ռ., (աշխտ.), Ի Հայ իրաւական մտքի զանգարան, Գիրք 1, Երեւան 2001, 561:

58 Ամդ, յօդ. 1, 566, 568:

Օրէնագրքում սահմանուած են նաեւ քաղաւորի պարտաւորութիւնները պատերազմական իրավիճակում.

1) պատերազմը յաղթելուց յետոյ թագաւորին պատշաճ չէ այլեւս մարդասպանութիւնը՝ «...բացառութեամբ այն այլագգիմների, որոնք կռուի պատմատն են եղել»:

2) Քաղաքը պաշարելիս թագաւորը պարտաւոր է հնազանդութեան կոչել բնակչութեանը, խնայել հնազանդների կեանքը եւ սպանել միայն մեղաւորներին: Մեղանշողները ներման են արժանանում ենթարկուելով միայն խոշտանգումների:

3) Թագաւորը պէտք է արգելի նուաճուած երկրների այգիները եւ արտերն աւիրել:

4) Նա աւարառութեան նպատակով չպէտք է գող ու աւազակ ուղարկի, այլ աւարը վերցնի բացայայտ յարձակմամբ⁵⁹:

Ասպետութեան հիմնարկը կարեւոր նշանակութիւն ունէր կիրիկեան Հայաստանում: Զիաւոր-ասպետները (ազատներ) կամ կալուածատէրերը կազմում էին զօրքի առանցքը: Հեծեալ-ասպետի կոչումը պարտադիր էր արքայազուն եւ ինքնակալ իշխանների համար: 14-15 տարեկան տղաներին այդ կոչմանն արժանացնում էր թագաւորը՝ ազգային-եկեղեցական մեծ տօնակատարութիւնների ժամանակ, երբ ասպետական աշխարհազօրի զօրատես էր անցկացւում: Ասպետները կրում էին «Ծառայել խաչին եւ հայոց առիւծին» մակագրութեամբ հագուստ, որի վրայ պատկերուած էին ոսկէ խաչ եւ առիւծ: Ասպետներն ունէին որոշակի արտօնութիւններ: Օրինակ՝ սահմանուած է այլահաւատների դէմ պատերազմում գէնքի ուժով ռազմաւար ձեռք բերելու իրաւունքը. «...աւելի օրինական ապրանք ու եկամուտ չկայ, քան այն, որ մարդ իր սրով ձեռք է բերում անհաւատների դէմ կռոււմ»: Օրէնքով թոյլատրելի է նաեւ ձեռք բերուած գոյքի վաճառքը կամ նուիրաբերումը, հակառակ դէպքում՝ «...նա գող կը լինի, եւ պիղծ է այն ամէնը, ինչ պահում է, իսկ իր օրինական բաժինը պահելը ազնիւ է»⁶⁰:

Մմբատ Սպարապետը սահմանել է պատիժներ՝ զինուորական օրինախտութեան համար: Ըստ նրա՝ պատիժը պէտք է կիրառել յանցագործութեան մէջ մեղադրուող անձի նկատմամբ՝ անհատական մեղսայնացման սկզբունքի համաձայն. «Նքէ որդին օրէնքով մահապատժի դատապարտուի, նրա հօրը չպէտք է բանտարկել,

59 Ամդ, յոդ. 1, 566:

60 Ամդ, յոդ. 143, 623:

եւ ոչ էլ եղբորը», որովհետեւ «...արդարադատութիւնը պահանջում է, որ ամէն մարդ իր գլխով պատասխան տայ»⁶¹: Դատաստանագրքում միակ բացառութիւնը պետական դաւաճանութիւնն է, երբ մահուան դատապարտուած անձի հետ պատասխանատուութիւն են կրում կինը, եղբայրները եւ յանցագործութիւնից յետոյ ծնուած նրա զաւակները: Օրինակ՝ թշնամուն ռազմավարական նշանակութեան բերդեր կամ այլ կառոյցներ յանձնելու դէպքում մեղսագործները մահապատժի են ենթարկւում, իսկ «...նրանց կանայք ու երեխաները ծառայի կարգով պահոււմ են թագաւորի պալատում» կամ վաճառուում են⁶²:

Թագաւորն ունի ներման իրաւունք, եւ նրա ամենամեծ ողորմածութիւնը՝ «...կեանքը խնայելու դէպքում, յանցաւորին կուրացնելն է»: Բայց եթէ յանցագործի դաւաճանութիւնն ապացուցւում է, ներումը բացառւում է: Սմբատը դաժան պատիժ է սահմանել այն անձի համար, ով «...թուրքի է յանձնում քրիստոնեային»: Այս պարագայում մեղսագործը դատապարտուում է մահապատժի կամ ենթարկւում մարմնական տանջանքների: Ըստ օրէնքի՝ պէտք է «...հանեն աչքերը կամ կտրեն գոյգ ձեռքերը եւ պէտք է ցմահ ապաշխարի»⁶³:

Այդպէս՝ ելնելով պետական անվտանգութեան գերխնդրից՝ Սմբատ Սպարապետն առաւել կարեւորում է պետական սահմանների, ռազմավարական նշանակութեան կառոյցների պահպանումը, դատապարտում պետութեան դէմ կատարուած յանցագործութիւնները (դաւաճանութիւն, լրտեսութիւն, զինուորական գաղտնիքի հրապարակում եւ այլն): Միաժամանակ, ելնելով մարդասիրական նկատառումներից, օրէնագէտն արգելում է վայրագ գործողութիւնները եւ խաղաղ բնակչութեան կոտորածը թշնամու գրաւուած տարածքներում:

Հայ իրաւաբաղաւորական մտքի պատմութեան մէջ առանձնակի տեղ ունի ԺԼ. դարի ազգային-ազատագրական պայքարի եւ սահմանադրական պետականութեան գաղափարախօս ՇԱՀԱՄԻՐ ՇԱՀԱՄԻՐԵԱՆԸ (1723-1797): Նրա գլուխգործոցը՝ «Որոգայթ փառաց»⁶⁴ (1773), արտացոլում է ազգային քաղաքական մշակոյ-

61 Աճդ, յօդ. 124, 617:

62 Աճդ, յօդ. 1, 565:

63 Աճդ:

64 ՇԱՀԱՄԻՐ ՇԱՀԱՄԻՐԵԱՆ, Գիրք անուանեալ Որոգայթ փառաց վասն կալանաւորելոյ ամենայն գործ անկարգութեամ, Տպգր. Ն. Աղանեանի, Թիֆլիս 1913:

Թի էական բնութագրերը: Նա առաջադրել է իրաւական-ժողովրդավարական պետութեան ձեւ՝ հիմնուած ազգային ինքնիշխանութեան, օրէնքի գերակայութեան, խորհրդարանական կառավարման եւ հասարակական բարօրութեան սկզբունքների վրայ: Ինչպէս միջնադարի հայ օրէնագէտների, այնպէս էլ Շահամիրեանի քաղաքական փիլիսոփայութեան եւ օրէնսդրական գործունէութեան հիմքում մարդու հիմնախնդիրն է: Կառավարման լաւագոյն համակարգը, ինչպէսեւ դրական իրաւունքի (այդ թւում՝ զինուորական օրէնքների) ակունքները նա փաստարկում է՝ բացայայտելով մարդու արարման խորհուրդը, բնութիւնը, անձնիշխանութիւնը, նպատակն ու կոչումը⁶⁵:

Շահամիրեանի մեկնութեամբ՝ Աստուած ողջ գոյերի Սկզբնապատճառն ու Նախաշարժիչն է: Նա մարդուն՝ արարեց բնական բնութեամբ, իսկ Աստուածային շնչով շնորհեց բանական ոգի, որ կարողանայ իմաստնութեամբ կառավարել: Աստուած ստեղծեց եւ պատուիրեց պահպանել Օրէնքը, որպէսզի որեւէ մէկը չկարողանայ իշխել մարդու բնութեան եւ հոգու վրայ, բացի Աստծուց: Մարդը պէտք է ապրի ոչ թէ իբրեւ գազանաբարոյ եւ փոփոխական բնութեամբ արարած, այլ որպէս բանական զօրութեամբ ու կատարեալ էութեամբ մարդ՝ սանձելով փոփոխական բնութիւնն անխախտ օրէնքներով: Քանզի օրէնքը որոգայթ է նրանց համար, ովքեր փորձում են չարաշահել իրենց դիրքը, կատարել ինքնիշխան, ինքնագլուխ գործողութիւններ:

«Որոգայթ» փառացի» առաջին՝ ներածական մասն ազատութեան ու անկախութեան գաղափարների ու դրանք իրականացնողների ջատագովութիւնն է, որ տեսական-իմաստասիրական եւ գիտամեթոդաբանական նշանակութիւն ունեցաւ Հայաստանի Սահմանադրութեան նախագծի կերտման գործում: Նախագծում առկայ միջազգային եւ զինուորական իրաւականոմները բխում են Հայաստանի սահմանների անվտանգութեան պահպանման, երկրի ներքին կարգուկանոնի հաստատման նպատակներից:

Շահամիրեանը գնահատում է վրացիներին, ովքեր պահպանեցին «շուր ազատութեան ի մէջ ազգին իւրեանց»՝ չթուլացնելով բա-

65 Մանրամասն տես՝ ՍԱՐՎԱԶԵԱՆ, Լ., Շահամիր Շահամիրեանի քաղաքական-փիլիսոփայական հայեցակարգը՝ որպէս օրէնսդրութեան հիմք, ի Պատմութիւն եւ հասարակագիտութիւն (Գիտական յօդուածների ժողովածոյ), ՀՊՄՀ հրտ., Երեւան 2016, 335-356:

նական հոգու զօրութիւնը: Մտածողն առաւել արժեւորում է Ամերիկեան Անկախութեան պատերազմը՝ յանձինս Ջորջ Վաշինգտոնի, ով պայքարում էր յանուն ազատութեան՝ ընդդիմանալով բրիտանացիներին: Ամերիկացու ազատասիրութիւնը «...քնական է ի քնութեանս մարդոյ»: Ճիշտ այդպէս էլ հայերը պէտք է ջանան ազատուել բռնատիրութիւնից ու ազգային օրէնքներով վերականգնել պետականութիւնը: Նա ազատութեան ջատագովութիւնն աւարտում է իմաստուն խորհրդով. «Լիմիցում մեք տէր միմիայն յաշխարհին մերոյ եւ թոյլ մի՛ տացումք, զի քայլ մի ի յերկրէ այլոց աւելանալոյ վասն մեր, եւ մէնջ պակասիլ վասն այլոց, ուրեմն ջանալ ստանալ այն, որ սեպեական ժառանգութեմէ Հայոց ոչ է անիրաւութիւն եթէ ո՛չ արդարութիւն (ընդգծումը. - Լ.Ս.)»⁶⁶:

Կարեւորելով ռազմարուեստի նշանակութիւնը՝ Շահամիրեանը հէնց ներածութեան մէջ հայ հայրերին յորդորում է որդիներին սովորեցնել «...զէմքի հետ վարուելու [կերպը], զիմուրական արիեստը եւ հնազադուել օրէնքներին»: Իսկ հայ տիկնանց խորհուրդ է տալիս այնպէս դաստիարակել դուստրերին, որ «...նրանք ամուսնանան քաջ տղամարդկանց եւ յաղթական զիմուրականների հետ», ինչպէս նաեւ դատապարտեն ամուսիններին, «...եթէ նրանք ծառայութեան մտնեն այլ ազգերի մօտ»⁶⁷: Մտածողի համոզմամբ՝ այս պատգամների կատարումը բաւարար կը լինի, որ Հայաստանում հաստատուի ազգային բարօրութիւն ու երջանիկ կեանք:

Սահմանադրութեան առաջին յօդուածում որոշարկուած են Հայաստանի պետական սահմանները. հանրապետութիւնը պէտք է ստեղծուէր Հին Հայաստանի սահմանների շրջանակում՝ ընդգրկելով Արեւմտահայաստանը, Արեւելահայաստանը եւ Աղուանքը: Հայկական ողջ տարածքը՝ «...կենդանական ու բուսական պաշարներով եւ արդիւնքներով եղել է եւ պիտի մնայ Հայաստան անուամբ, եւ նրա բնակիչները՝ որպէս մարդկային հանրութիւն կոչուում են հայեր, եւ ողջ կենդանական աշխարհը՝ Հայաստանի երկրի երեսին, թէ ջրերում, հայ ժողովրդի ժառանգութիւնն է. այս աշխարհից չպէտք է աւելանայ

66 ՇԱՀԱՄԻՐ ՇԱՀԱՄԻՐԵԱՆ, *Գիրք անուանեալ Որոգայթ փառաց վասն կալանաւորելոյ ամենայն գործ անկարգութեան*, 139: Նկատի ունենալով, որ Շահամիրեանն իր աշխատութիւնը շարադրել է դժուարըմբռնելի միջին գրաբարով, բնագրային մէջբերումներն այսուհետ կը ներկայացուեն աշխարհաբար թարգմանութեամբ:

67 ՇԱՀԱՄԻՐ ՇԱՀԱՄԻՐԵԱՆ, *Որոգայթ փառաց*, ի ԱԻԱԳԵԱՆ Ռ., (աշխ.), *Հայ իրաւական մտքի գանձարան*, Բ., Երեւան 2002, Յանելուած 1, 45:

կամ պակասի ոչ մի թիզ հող, այստեղ միշտ հաստատ պետք է պահպանուի Հայոց Տունը⁶⁸ համաձայն Հայաստանի սահմանադրության»⁶⁹:

Այդպես՝ Հայաստանի պատմական ողջ տարածքը, բնիկ ազգաբնակչությունը, երկրի ընդերքը, ջրերը եւ այն ամէնը, ինչ գտնուում է երկրում, հռչակուում է հայոց ազգային-պետական անօտարելի սեփականություն՝ ազգային կառավարութեան իշխանութեան ներքոյ: Վերականգնուում է Հայաստանի վարչատարածքային նախկին բաժանումը՝ ըստ նահանգների եւ գաւառների, «...որպէսզի ոչ ոք չհամարձակուի անգամ մի քիչ հող աւելացնել կամ պակասեցնել որեւէ տեղից»⁷⁰: Սահմանադրօրէն ամրագրուում է հայ ազգի իրական անձ լինելը:

Ըստ նախագծի՝ Հայաստանի օրէնսդիր մարմինը՝ Հայոց Տունը, ընտրուում է թէ՛ գործադիր իշխանութիւնը, թէ՛ երկրի տարբեր գերատեսչութիւններն ու դրանց ղեկավարներին: Իւրաքանչիւր բարձր պաշտօնեայ՝ պատգամաւոր, նախարար, դատաւոր, զօրապետ եւ այլն, իր խորհրդականներով չի կարող պաշտօն ստանալ, «...եթէ բուն հայոց սեփական ազգից եւ ծնունդով Հայաստանցի չէ եւ Քրիստոսով մկրտուած չէ Հայաստանեաց Սուրբ Եկեղեցու դաւանութեամբ»⁷¹:

Հայաստանում պէտք է գործէին հետեւեալ զինուորական գերատեսչութիւնները.

~ Սպարապետութիւն. *երեք տարով ընտրուում էր ինը անձ՝ զօրապետութեան պաշտօնի համար: Նրանցից իւրաքանչիւր երեքը կազմում էին առաջին, երկրորդ եւ երրորդ սպարապետութիւնները: Ըստ հանդերձանքի գոյնի՝ երեք սպարապետութեան զօրապետերը կոչուում են «կարմիր սպարապետ, կապոյտ սպարապետ եւ դեղին սպարապետ»: Նրանց դրօշները նոյն գոյներով են, եւ զօրքերը կրում են կարմիր, կապոյտ եւ դեղին համազգեստ»⁷²:*

68 «Հայոց տուն» հասկացութիւնը Շահամիրեանը կիրառում է տարբեր իմաստներով՝ որպէս «Հայկական պետութիւն», «Հայոց աշխարհ», «Հայաստան», «Հայոց օրէնսդիր մարմին» եւ այլն:

69 ԾԱՀԱՄԻՐ ԾԱՀԱՄԻՐԵԱՆ, *Որոգայթ փառաց*, մշ. աշխ., յօդ. 1, 46-47:

70 Անդ, յօդ. 107, 100:

71 Անդ, յօդ. 33, 59:

72 Անդ, յօդ. 24, 56, յօդ. 285-287, 134:

- ~ Ասպետութիւն. *ինը անձ ընտրուում է հեծելազօրի հրամանատարութեան համար* («վասն ասպետութեան») ⁷³;
- ~ Հրաձգային բարձր հրամանատարութիւն. *ինը անձ ընտրուում է «հրաձգային զօրքերի բարձր հրամկազմի («հրաց զօրագլխութեան») համար»* ⁷⁴;
- ~ Բանակի այլ պաշտօնապետեր. *27 մարդ (երեքական անձով) երեք տարով ընտրուում է հետեւեալ պաշտօններում.*
 - ա) «լրտես պետութեան» հետախուզութեան պետ. *երեք անձինք պէտք է ապահովեն երկրի անվտանգութիւնը, տեղեկութիւններ հայթայթեն՝ Հայոց պետութեան նկատմամբ արտաքին վտանգի, այլ պետութիւնների յանցաւոր մտադրութիւնների վերաբերեալ եւ դրանք հաղորդեն Գաղտնի խորհրդին* ⁷⁵,
 - բ) *զինամթերքի մատակարարման պետ,*
 - գ) *վառօդի արտադրութեան պետ,*
 - դ) *կառաշինութեան պետ,*
 - ե) *վրանաշինութեան պետ,*
 - զ) *սննդամատակարարման պետ,*
 - է) «գանձապետութիւն» *դրամական գործառնութիւնների պետ,*
 - ը) «երկրաչափութեան» *պետ հողաշինութեան եւ տեղադրնութեան գործերի,*
 - թ) «պետ տկարաց եւ աղքատաց» ⁷⁶ *հիւանդանոցների եւ աղքատանոցների պետ:*
- ~ Հազարապետութիւն. *Հայոց Տան բոլոր պատգամաւորների միջից ընտրուում է 90 անձ՝ «...հազարապետութեան պաշտօնի համար... իրենց կեանքի լրիւ ժամանակով»* ⁷⁷, *այսինքն՝ ցմահ: Հայոց բանակի 1000 զինուորից բաղկացած իւրաքանչիւր զօրամաս գլխաւորում է մէկ հազարապետ: Վերջինս ունի իրաւունք՝ անօրինականութեան դէպքում պատժել ենթակա-*

73 Անդ, յօդ. 25, 57:

74 Անդ, յօդ. 26, 57:

75 Անդ, յօդ. 27, 57, յօդ. 65, 75:

76 Անդ, յօդ. 27, 57:

77 Անդ, յօդ. 30, 58:

ներին վարչական տոյժով կամ կալանմամբ, բայց եթէ դատարանն ապացուցի կալանուածի անմեղութիւնը, հազարապետը պարտաւոր է «...պատասխանատուութիւն կրել կալանաւորութեան հետեւանքով զինուորին հասցուած վնասի համար»⁷⁸:

Սահմանադրութեան նախագծում առկայ են զինուորական բազմաթիւ կանոններ՝ Հայաստանի զինուած ուժերի, երկրի աշխտագութեան պաշտպանութեան, զինուորականների իրաւունքների ու պարտականութիւնների, զէնքի պատրաստման, դրա ներմուծման ու արտահանման, գերեվարութեան եւ այլ հարցերի վերաբերեալ:

Հայաստանի պետութիւնը պէտք է պահպանի «իմնաւոր հազարանոց վնասովի բանակ՝ եօթնամեայ զինուորական ծառայութեան ժամկետով»⁷⁹: Զօրքը կոչուած է հաւատարմօրէն ծառայել հայ ժողովրդին: Բանակը կազմուած է 21000 հեծեալ եւ 69000 հետեւակ զօրքից: Զօրքը բաղկացած է երեք զօրամիւսնորումից, որոնցից իւրաքանչիւրն ունի 7000 հեծեալ եւ 23000 հետեւակ: Շահամիրեանը սահմանել է զօրքի համալրման յատուկ կարգ, որի համաձայն՝ զօրքը համալրուում է կամաւոր հիմունքներով կամ վիճակահանութեամբ. «Եթէ զինուորական ծառայութեան մէջ կամաւոր կերպով մտնեն իմնաւոր հազար հայոց երիտասարդներ ու պատանիներ՝ բաւարար է, իսկ եթէ ոչ, ապա «...Հայոց պետութիւնը բոլոր ցաւառներից ու բնակավայրերից պատանիներ է հաւաքագրում վիճակահանութեամբ՝ հարիւրից հինգհինգ»⁸⁰: Եօթ տարի ծառայելուց յետոյ զինուորն ազատ է՝ վերադառնալու տուն:

Բանակը գլխաւորում է Հայոց Տանն ընտրուած ինը զօրապետ: Ինչպէս նշուել է, նրանցից իւրաքանչիւր երեքը կազմում է առաջին, երկրորդ եւ երրորդ սպարապետութիւնները: Հեծեալազօրն ու հետեւակազօրն իրենց զօրապետներով «...ենթարկուում են Նախարարի՝ գրաւոր եւ բանաւոր հրամաններին՝ հնազանդ Հայոց Աւագների խորհրդին»⁸¹: Հայաստանի վարչատարածքներում տեղակայուած զինուած ուժերը ենթարկւում են զօրահրամանատարին, ով «...ղեկավարւում է մահանգի կառավարչի հրահանգներով»⁸²: Այդ-

78 Անդ, յօդ. 74, 82:

79 Անդ, յօդ. 277, 131-132:

80 Անդ, յօդ. 411, 168. յօդ. 353, 150:

81 Անդ, յօդ. 278, 132:

82 Անդ, յօդ. 164, 111:

պէս՝ զինուած ուժերը վերահսկում է պետական (կենտրոնական եւ նահանգային) իշխանութիւնը: Բայց «...պատերազմի ժամանակ զինուորական իւրաքանչիւր խմբաւորում իր հրամանատարին ընդունում է որպէս մախարար»⁸³, այսինքն՝ գործադիր իշխանութեան բարձրագոյն պաշտօնեայ: Հրամանատարներն ունեն տեղակալներ, եւ եթէ վիրաւորուում է առաջին տեղակալը, զինուորները երկրորդ տեղակալին ընդունում են նոյն կարգով:

Շահամիրեանը նախագծում սահմանել է զօրահրամանատարների ու զինուորների իրաւունքներն ու պարտականութիւնները: Նա կարեւորում է հրամանատարների ռազմադաստիարակչական պարտաւորութիւնը. իւրաքանչիւր Շաբաթ օրուայ երեկոյեան նրանք պէտք է զինուորների համար մեկնաբանեն զինուորական օրէնքները⁸⁴: Հազարապետերը պարտաւոր են աշաւուրջ լինել իրենց պաշտպանութեան յանձնուած տարածքներում, հաշուառել զօրամասի զինուորներին, տեղեկատուական զեկոյց ներկայացնել զօրապետին, ստուգել զինուորների հանդերձանքն ու լրացնել պակասը⁸⁵: Հրամանատարներն իրենց ենթակայութեան ներքոյ գտնուող զօրքի վերաբերեալ պարտաւոր են տարեկան չորս հաշուետուութիւն ներկայացնել իրենց պետին՝ հետեւեալ կարգով. տասնապետը հաշուետու է հարիւրապետին, հարիւրապետը՝ հազարապետին, հազարապետը՝ զօրագլխին, զօրագլուխը՝ սպարապետին, իսկ սպարապետը՝ նախարարին: Ի վերջոյ՝ «Նախարարը հաշուետուութիւն է ներկայացնում Հայոց Տան Աւագների խորհրդի պալատի ատեան»⁸⁶, որտեղ ամփոփուում են տարուայ ռազմական արդիւնքները:

Ըստ օրէնքի՝ զինուորական դասին պատկանող անձինք պարտաւոր են պաշտպանել սեփական արժանապատուութիւնը: Եթէ որեւէ մէկը՝ տասնապետից մինչեւ նախարար, անարգանքի է ենթարկւում ինչ-որ անձից ու անպատասխան է թողնում, իսկոյն պաշտօնանկ է արւում, «...քանզի մի անգուսպ մարդուց չի կարողացել պաշտպանել իր աստիճանի ազատ դասի պատիւը»⁸⁷:

Զինուորներն իրաւունք ունեն յարձակուել միայն հրամանատարի հրամանով, սակայն «...քացաւում է Աւագների խորհրդի՝

83 Անդ, յոդ. 280, 133:

84 Անդ, յոդ. 301, 136:

85 Անդ, յոդ. 302, 136:

86 Անդ, յոդ. 307, 137:

87 Անդ, յոդ. 494, էջ 181:

Հայոց գերագոյն իշխանութեան վրայ յարձակուելը եւ Աւագների խորհրդի հրամաններին չենթարկուելը»⁸⁸: Իւրաքանչիւր զինուոր պարտաւոր է հետեւել մաքրակեցութեան կանոններին, մաքուր պահել իր հագուստը, իւղով մաքրել զէնքը, ուսապարկում ունենալ որոշակի զինամթերք⁸⁹:

Օրէնսդրօրէն կարգաւորուում է նաեւ գէմֆի արտադրութիւնը: Ըստ Շահամիրեանի՝ Հայաստանում նպատակայարմար է, որ հրացանները պատրաստուեն հաւասար չափերի՝ փողի երկարութեամբ ու տրամաչափի մեծութեամբ, որ հարկ եղած դէպքում «...մի հրացանի կայծփարը, գնդակը եւ միտքը փոխարինուի միւսով»⁹⁰:

Զինուորական օրէնքները ներառում են որոշակի պատիժներ՝ ուղղուած օրինազանցների դէմ: Ըստ օրէնքի՝ զինուորական իւրաքանչիւր պաշտօնեայ Աւագների խորհրդի հրամանները զանցառելիս «...կորցնում է իշխանական ազատութիւնը, կալանաւորուում զանցառուի տեղակալի կողմից եւ շղթայակապ բանտարկուում»⁹¹: Ընդ որում՝ անհնազանդութեան համար սահմանուած են խիստ պատիժներ՝ ընդհուպ մահապատիժ: Հայոց նախարարն իրաւունք ունի մեղադրանք ներկայացնել զինուորական օրինազանց պաշտօնեաների դէմ եւ կալանել տալ նրանց: Բայցեւ նախարարի իրաւունքը սահմանափակ է, քանզի զինուորականներին պաշտօնագրկելու համար նա «...պարտաւոր է ունենալ արաբի յանցաւորութեան աստիճանից ելնող դատական վճիռ»⁹²: Կալանաւորուած կամ կարգապահական տոյժի ենթարկուած զինուորականները պէտք է հնազանդուեն իրենց վերադասին: Նրանք կարող են ազատ արձակուել միայն դատարանի վճռով:

Սահմանադրութեան մի շարք յօդուածներ վերաբերում են պատերազմական իրադրութեանն առնչուող խնդիրներին, օրինակ՝ մարտադաշտում զօրքի կայանմանը (յօդ. 328, 336), զօրաշարժի կարգին (յօդ. 329, 332, 333), տեղազննութեանը (յօդ. 331, 335), զօրամաս բերուող եւ տարուող զրութիւնների վերահսկմանը (յօդ. 338), արտակարգ դրութեան յայտարարմանը (յօդ. 344), մարտական գործողութիւններին (յօդ. 334) եւ այլն:

88 Անդ, յօդ. 281, էջ 133:

89 Անդ, յօդ. 304-306, 137:

90 Անդ, յօդ. 117, 102:

91 Անդ, յօդ. 486, 179:

92 Անդ, յօդ. 309, 138: Անդ, յօդ. 308:

Շահամիրեանը սահմանել է նաեւ արգելող կանոններ: Օրինակ՝ «Ոչ ոք՝ ինչ կոչում էլ ունենայ, իրաւունք չունի քանակից դուրս հանել ոչ գէմք, ոչ սննդամթերք, ոչ դրամական միջոցներ... առանց սպարապետի գրաւոր թոյլտուութեան»⁹³, հակառակ պարագայում՝ կը կալանաւորուի:

Ուշագրաւ են «Որոգայթ փառացում» սահմանուած միջազգային իրաւականոնները, որոնք վերաբերում են պատերազմական իրավիճակում գործող հաղորդակցութեան, գերեվարութեան, անարի բաժանման, պաշարուած բնակավայրերից դուրս գալու կարգին, գրաւեալ տարածքների բնակչութեան անձնական եւ գոյքային իրաւունքների պաշտպանութեանը, ռազմատուգանքին ու խաղաղութեան դաշնագրերին:

Ըստ օրէնքի՝ «Պատերազմի ժամանակ բանագնացութիւնն ազատ է միայն զօրապետերի միջեւ»: Բանագնացներն ազատ ելումուտ ունեն հակառակորդի բանակատեղի՝ «...սպիտակ դրօշը ձեռքին, որ բանագնացի նշանն է»⁹⁴: Նրանք յանձնում են պաշտօնական գրութիւնները եւ ապահով վերադառնում իրենց բանակատեղի: Բանագնացներն իրականացնում են նաեւ հասարակական թղթակցութիւն: Հակառակորդի կամ գրաւեալ երկրներում գտնուող հարազատներին հասցնելով զինուորականի կամ այլ անձանց նամակները՝ նրանք պատասխան գրութիւնները բերում են հասցէատէրերին, եթէ դրանք գերծ են ռազմական կարեւոր կամ գաղտնի տեղեկատուութիւնից⁹⁵: Սակայն «Պատերազմի ժամանակ բռնուած թշնամի ամէն մի լրտես իսկոյն մահապատժի է ենթարկուում»⁹⁶:

Այդպէս, կարեւորելով զինուորականների ու ժողովրդի քաղաքացիական իրաւունքների իրացումը՝ Շահամիրեանը, ինչպէս Միխիթար Գօշն ու Սմբատ Սպարապետը, գերագոյն պատիժ է սահմանում պետութեան եւ ազգի անվտանգութեանը սպառնացող զինուորական յանցագործութիւնների համար:

Օրէնսգէտը մարդասիրական վերաբերմունք է պահանջում պաշարուած բնակավայրերի զինուորների ու խաղաղ բնակչութեան հանդէպ: Ըստ օրէնքի՝ եթէ որեւէ նահանգի, քաղաքի կամ

93 Անդ, յոդ. 337, 145:

94 Անդ, յոդ. 321, 141:

95 Անդ, յոդ. 322, 141:

96 Անդ, յոդ. 467, 176:

ամրոցների յանձնման վերաբերեալ կնքուած է դաշնագիր՝ պէտք է անխախտ պահել այն (յօդ. 320): Պաշարուած քաղաքի զինուորներին ու բնակիչներին տրուած է 15օրեայ արտօնեալ ժամկէտ՝ «...ընտանիքով եւ ունեցուածքով դուրս գալու թշնամու քաղաքից կամ ամրոցից»⁹⁷: Նրանք իրաւունք ունեն մնալ Հայոց երկրում՝ որպէս ազատ վտարանդի, եթէ վճարեն իրենց ունեցուածքի տասանորդը: Իսկ պատերազմի աւարտից եւ խաղաղութիւն հաստատուելուց յետոյ կրկին ազատ են՝ վերադառնալու իրենց հայրենիք:

Միաժամանակ՝ դաժանօրէն պատժուած է դաշնագիրը խախտող թշնամին: Եթէ որեւէ կառավարիչ կամ բերդակալ դաւաճանութեամբ խախտում է հայոց զօրքի պաշարած քաղաքը կամ բերդը խաղաղ յանձնելու դաշնագիրը, ինչի հետեւանքով զոհուած է 24 հայ զինուոր, հայոց բանակը պարտաւոր է յարձակուել եւ մտնել քաղաք կամ բերդ: Այս պարագայում՝ «...թշնամու ոչ մի զինուոր կամ հրամանատար կեցիւմի չպետք է մնայ մեր սրի բերանից», իսկ օրինազանց կառավարիչը կամ բերդակալը «...ամարգամֆի ենթարկուելով՝ պետք է կախուի քաղաքի դարպասից կամ բերդի գլխից», եւ թշնամու ողջ ունեցուածքը դառնայ հայ զինուորների օրինական աւարը: Ըստ օրէնքի՝ մինչեւ մեղաւորը չմեղանչի, «...թշնամու քնակչութեան նկատմամբ մեր զինուորների կատարած ամէն մի գործողութիւն դատապարտելի չէ»⁹⁸:

«Որոգայթ փառացում» առկայ է օրէնք՝ օտարազգի քրէական յանցագործի պաշտպանութեան վերաբերեալ: Պատերազմի կամ խաղաղութեան ժամանակ օտար երկրից փախած քրէական յանցագործը կարող է ապաստանել Հայաստանում՝ պետութեան երաշխաւորութեամբ ազատուելով մահապարտութիւնից. «Ոչ ոք իրաւասու չէ հետացնել նրան Հայոց պետութեան սահմաններից՝ քացառութեամբ», եթէ տուժող կողմը կեանքի ներում է շնորհում նրան, եւ նա կամովի ցանկանում է լքել մեր երկիրը, ապա նա ազատօրէն կարող է հեռանալ՝ ուր իմքը կամենայ»⁹⁹:

Պատերազմի ժամանակ Հայաստանում ապրող օտարազգիների անձը եւ ունեցուածքը յայտարարուած են անձեռնմխելի: Իսկ եթէ որեւէ մէկը ցանկանում է վերադառնալ հայրենիք, ապա պատերազմի հռչակման օրից սկսած՝ 45 օրուայ ընթացքում

97 Անդ, յօդ. 325, 141-142:

98 Անդ, յօդ. 491, 180:

99 Անդ, յօդ. 326, 142:

կարող է ստանալ իր անձի մասին ազատագիր եւ հայերի պաշտպանութեամբ հասնել մինչեւ իր երկրի սահմանը: Այս դէպքում «...նրա ողջ ունեցուածքը մնում է իր ներկայացուցչի խնամքի տակ՝ մինչեւ խաղաղութեան հաստատումը, որից յետոյ կարող է իր ունեցուածքը հանել մեր երկրից»¹⁰⁰:

Գրաւեալ տարածքներում արգելւում է աւերել ժողովրդի տներն ու այգիները, բացի այն շինութիւններից, որոնց քանդելն անհրաժեշտ է ռազմավարական նպատակներով (յօդ. 389): Իսկ դաշնագրով յանձնուած թշնամու դաւառների բնակիչները «...անձի եւ գոյքի պաշտպանութիւն են գտնում մեր կողմից, որի համար պէտք է նրանց պահպանել որպէս մեր ժողովուրդ եւ թոյլ տալ... ազատօրէն տնօրինել սեփական ունեցուածքը» (ընդգծումը.՝ Լ.Ս.): Միայն այն հարկերն ու մաքսը, որ նրանք տալիս էին իրենց տէրերին, պէտք է տան հայերին: Ընդ որում՝ բանակի նահանջելու ժամանակ «...ոչ ոք իրաւունք չունի գերել նրանց, տեղահանել իրենց բնակավայրերից եւ աւարի ենթարկել նրանց ունեցուածքը. նրանք իրենց տեղերում են մնում հաստատ ու անշարժ՝ հնազանդուելով իրենց տէրերին»¹⁰¹:

Ըստ օրէնքի՝ հայերի պաշտպանութեանն ապաւինած օտարների դաւառները, աւանները, այգիներն ու ընտանի կենդանիները յայտարարւում են հայերի ժառանգական սեփականութիւնը, իսկ «...նրանց տէրերը հաւասարեցւում են սովորական հարկ, մաքս, հաս, քաժին վճարող մեր հնազանդ բնակչութեանը»¹⁰², եւ ապահովւում է նրանց անվտանգութիւնը: Սակայն, եթէ պաշտպանութիւն ստացած հպատակները դաւաճանում են, «...արժանանում են իրենց դաւաճանութեամբ պատմառած վնասին համապատասխան պատժի, ընդհուպ՝ մահապատիժ, գերութիւն եւ ողջ ունեցուածքի բռնագրաւում»¹⁰³: Դատաւճիռը կայացնում է այն սպարապետը, ում գնդի զինուորները տեղեկացրել են դաւաճանութեան մասին:

Սահմանադրութեան նախագծում սահմանուած է նաեւ գերեզմանութեան կարգը: Մի շարք իրաւականոններում արգելւում է գերիներէի սպանութիւնը, վաճառքը եւ կանանց գերավարութիւնը: Այն զինուորականը կամ զօրահրամանատարը, ով «...սառնարիւն կերպով սպանում է իր անմեղ գերուն՝ մահապատժի է ենթարկ-

100 Անդ, յօդ. 325, 142:

101 Անդ, յօդ. 387, 162:

102 Անդ, յօդ. 390, 163:

103 Անդ, յօդ. 391, 163:

ւում»¹⁰⁴: Բայց եթէ գերին անհնազանդ է, նա է խստորէն պատ-
ժուում: Օրինակ՝ եթէ հայոց զօրքին գերի յանձնուած թշնամու
զինուորը կամ հրամանատարը մինչեւ խաղաղութեան դաշինք
կնքելը զինուած յարձակուի հայերի վրայ կամ փախչի, մահա-
պատժի է ենթարկւում (յօդ. 488): Իսկ եթէ զինուորականն անձ-
նատուր է լինում հայ զինուորի կամ սպայի հանդիպելիս եւ
գէնքը վայր է դնում, «...չպէտք է սպանուի» (յօդ. 318):

Պատերազմի ժամանակ թէ՛ հեթանոս, թէ՛ քրիստոնեայ գե-
րիները վաճառքի ենթակայ չեն: Նրանց պէտք է պահել մինչեւ
խաղաղութեան հաստատումը: Գերիների պահպանման ծախսերը
պարտաւոր է վճարել թշնամի պետութիւնը, իսկ եթէ զլանում է
վճարել, «... գերութեանը դատապարտում է ծառայական վիճակի
(«ի պաշտօն ծառայութեան հայոց»)՝ ինչ գործում որ հարկաւոր կը
լինեն հայերին»¹⁰⁵: Օրէնքը թոյլատրում է հայ գերիներին փոխա-
նակել օտարազգի գերիների հետ: Հակառակ դէպքում՝ խաղա-
ղութեան դաշինք կնքելիս պէտք է թշնամուն հարկադրել վճա-
րել մեր գերի ընկածների գինը: Դաշինքի համաձայն՝ գերիներն
ազատ են մնալ կամ հեռանալ Հայաստանից:

Արգելւում է օտար կանանց գերեվարումը. «Թէ՛ պատերազ-
մի, թէ՛ խաղաղութեան ժամանակ իգական սեռի իւրաքանչիւր անձ
ազատ է գերութիւնից» եւ չի ենթարկւում բռնութեան: Եթէ թշնա-
մի երկրի կանայք կամովի «խառնակոււմ են» հայ զինուորների
հետ՝ մէկ արծաթ դահեկան վարձով, վերջիններս չեն պատժուում:
Բայց եթէ զինուորականը «...բռնութեամբ է խառնակոււմ թշնամու
կնոջ կամ աղջկայ հետ... դատոււմ է ըստ Հայոց օրէնքների»¹⁰⁶: Շա-
համիրեանը կարեւորում է կանանց պաշտպանութիւնը, ինչը
«...խորթ է բարբարոսների՝ նկատի ունենալով նրանց բռնի սովորու-
թիւնները»: Նա յոյս ունէր, որ «...Հայոց ազգը մեր թշնամիներից սի-
րոյ եւ պատուի կ'արժանանայ»¹⁰⁷, բայց, ցաւօք, ե՛ւ պատմութիւնը,
ե՛ւ ներկան այլ իրողութիւններ են վկայում հայոց թշնամիների
բռնութիւնների վերաբերեալ:

Շահամիրեանը հայ խաղաղ բնակչութեան գերեվարութեան
խնդիրը լուծում է հետեւեալ կերպ. ովքեր տեղահանուել են ի-
րենց բնակավայրերից, եւ աւարառուել է նրանց ունեցուածքը, հա-

104 Անդ, յօդ. 489, 180:

105 Անդ, յօդ. 317, 140:

106 Անդ, յօդ. 490, 180:

107 Անդ, յօդ. 319, 140:

յոց զօրքը պարտաւոր է հետապնդել թշնամուն՝ ստիպելով վերադարձնել «...մեր գերիներին՝ ունեցուածքով հանդերձ, աւելացրած՝ նոյնքան մարդ իր բնակիչներից եւ նոյնքան ունեցուածք [իր երկրից]՝ որպէս իր անօրէն վարմունքի տոյժ»¹⁰⁸։ Փաստօրէն՝ թշնամուց իրաւամբ ռազմատուգանք է պահանջուում խաղաղ բնակչութեանը տեղահանելու եւ նրա գոյքը բռնագրաւելու դէպքերում, ընդ որում՝ այն ժողովրդի համար, որ ոչ միայն զէնք չի գործածել ու ընդդիմացել, այլեւ բարեխղճօրէն վճարել է հարկերը։

Սահմանադրութեան նախագծում սահմանուած է նաեւ թըշնամու տարածքում ձեռք բերուած աւարի բաժանման կարգը։ Ըստ օրէնքի՝ թանկարժէք մետաղները (ոսկի արծաթ), քարերը, զարդերը, անասունները, խմիչքը եւ այլն, վաճառուում են աճուրդով, եւ գումարը բաժանուում է նախարարի, զօրապետների ու զինուորների միջեւ¹⁰⁹։ Պատերազմում հիւանդացած կամ զոհուած զինուորը (կամ նրա ընտանիքը) «...ձեռք բերուած աւարից ստանում է ողջ եւ առողջ զինուորականին հաւասար բաժին»¹¹⁰։ Ըստ օրէնքի՝ զոհուածներին հասնող աւարի բաժինը նախ տրուում է «...գոհուածի ժառանգներին, եթէ ժառանգներ չունի՝ մերձաւոր ազգականներին»¹¹¹։ Ակնյայտ է, որ զինուորական օրէնքներում, ինչպէսեւ իրաւունքի միւս ճիւղերում, Շահամիրեանը կարեւորում է օրէնքների համապատասխանութիւնը մարդու բնութեանը։

Օրէնսդէտը նախագծում քննարկում է պետութեան հարկային, մաքսային քաղաքականութիւնը՝ պետական հարկեր սահմանելով շահութաբեր ցանկացած գործունէութեան պարագայում. «Քանի որ Հայոց պետութիւնը բանակով պաշտպանում է Հայոց աշխարհը, ապահովում է Հայոց ազգի ազատութիւնը... հատուցում է թշնամու կողմից կողոպտուած ունեցուածքը... գերծ պահում Հայոց աշխարհը եւ ողջ ժողովրդին այլազգիների գերութեան լծից եւ պահում իր բարեխմամ հովանու ներքոյ... ուստի՝ այս ամէնի համար Հայաստանի ազգաբնակչութիւնը պարտաւորուածութիւն է կրում... հատուցել մեր պետութեանը՝ հարկ, մաքս, հաս, բաժին ու հնազանդութիւն ցուցաբերել մեր սահմանադրութեան հանդէպ»։ Տարեկան ստացուող բոլոր եկամուտներից, բարիքներից ու պարգէներից բնակիչները պարտաւոր են տասանորդ վճարել Հայոց պետութեանը, եւ «...տրուող հար-

108 Անդ, յօդ. 388, 162:

109 Անդ, յօդ. 311, 138:

110 Անդ, յօդ. 312, 139:

111 Անդ, յօդ. 314, 139:

կը մեր օրինական եւ իրաւական պարտքն է»¹¹²։ Այդպէս՝ հարկային քաղաքականութիւնը միտուած էր ապագայ Հայաստանի Հանրապետութեան արտաքին անվտանգութեան պահպանմանն ու հասարակութեան բարօրութեան հաստատմանը։

Սահմանադրութեան մէջ սահմանուած է մաքս՝ Հայաստան ներմուծուող կամ օտար երկրներ արտահանուող ապրանքների համար։ Ընդ որում՝ Հայաստան ներմուծուող գէնքի եւ զինամթերքի համար հարկ եւ մաքս չի դանձուում։ «Ամենայն գէն եւ գործիք պատերազմի մտցէ առ աշխարհն հայոց ազատ լիցի հարկից եւ մաքսից»¹¹³։ Այս յօդուածն արտացոլում է Հայոց բանակի վերազինման խնդրով շահագրգիռ Շահամիրեանի քաղաքական նպատակը՝ խրախուսելու գէնքի ու զինամթերքի ներմուծման ազատութիւնը։ Նա նաեւ սահմանել է օրէնք՝ որոշ ապրանքների արտահանման արգելքի մասին։ Ըստ դրա՝ «Ամէն մարդ ազատ է իր արտադրած ապրանքներն առելուրական մպատակներով արտահանել օտար աշխարհ, քացի գէնքից եւ գործիքներից... ոսկեայ եւ արծաթեայ իրերից ու զինամթերքից, որոնք խստիւ արգելուած են (ընդգծումը.՝ Լ.Ս.)»¹¹⁴։ Մէկ այլ յօդուածում շեշտում է հէնց ռազմական իրավիճակում գործող արգելքը։ «Պատերազմի ժամանակ արգելուում է Հայոց երկրից թշնամու տուն եւ երկիր, կամ բանակ՝ սնունդ, ոսկի, արծաթ, գէնք ու զինամթերք տանելը»։ Իսկ ով փորձի գաղտնի արտահանել, յանցանքը բացայայտուելուց յետոյ ապրանքը բռնագրաւուում է, եւ յանցաւորը «...բանտարկուում ու իր յանցանքի ծանրութեամբ արժանի պատիժ է կրում» ըստ դատավետի»¹¹⁵։

Ինչպէս Հայոց Դատաստանագրքերը, Սահմանադրութեան նախագիծը եւս բովանդակում է քրէական իրաւականոններ, որոնցում դատապարտուում են պետական իշխանութեան եւ Սահմանադրութեան դէմ ուղղուած իրաւախախտումները։ Անկախ պաշտօնից՝ եթէ վարչական կամ զինուորական որեւէ պաշտօնեայ ըմբոստանում է «Հայոց Տան եւ օրէնքների դէմ, մահապատժի է ենթարկուում», համախոհներով համդեր»¹¹⁶։ Ընդ որում՝ նրանց ժառանգներին (մինչեւ եօթներորդ սերունդ) արգելւում է պաշտօ-

112 Անդ, յոդ. 410, 167-168, յոդ. 345-347, 147-148, յոդ. 403-407, 166-167, յոդ. 412-416, 168-169։

113 Անդ, յոդ. 190, 116։

114 Անդ, յոդ. 152, 109։

115 Անդ, յոդ. 493, 180-181։

116 Անդ, յոդ. 484, 179։ Յօդ. 171-172, 113-114։

նախարել կառավարութեան մէջ եւ բանակում: Դաւաճաններն ու թշնամու լրտեսները մահապատժի են ենթարկուում: Պարզեւատրուում են այն անձինք, ովքեր յայտնում են ազգի եւ պետութեան նկատմամբ դաւադրութեան կամ չարանենգ այլ գործողութեան մասին: Իսկ եթէ որեւէ մէկը «...խաբարայութեամբ եւ նախանձից դրդուած է գրպարտում արդար մարդուն՝ պատիժ է ստանում»¹¹⁷: Արգելւում է այն հրամանների կատարումը, որոնք ուղղուած են Հայոց պետութեան դէմ:

«Որոգայթ փառացի» գաղափարադրոյթներին առնչւում է 1777-1779 Շահամիր Շահամիրեանի կազմած Հայ-ռուսական դաշնագրի նախագիծը¹¹⁸: Ըստ դրա՝ Հայաստանը հռչակուում է ինքնուրոյն ժողովրդավարական հանրապետութիւն, եւ այն պէտք է կառավարուի ազգային օրէնքներով. «Նախարարութիւն Հայաստանեայց լիցի հրովարտակաւ՝ ի տանէ Հայոց ըստ օրինացն Հայաստանեայց»¹¹⁹: Հայոց պետութիւնը պէտք է ղեկավարի բարձրագոյն օրէնսդիր մարմինը՝ Հայոց տունը, որ ռուսական կայսրութիւնը պարտաւոր է ճանաչել «իբրեւ զթագաւորն Հայաստանեայց»¹²⁰, այսինքն՝ որպէս Հայաստանի գերագոյն իշխանութիւն:

Ըստ նախագծի՝ թէեւ Հայաստանը, որպէս հայ-ռուսական դաշնագրի կողմ, ինքնուրոյն պետութիւն է իր վարչատարածքային կառույցով, պետական մարմիններով, այնուամենայնիւ՝ դաշնագրում սահմանափակուած է հայկական պետութեան ինքնիշխանութիւնը: Հայոց երկրի եւ ազգի անվտանգութիւնը պահպանելու նպատակով 20 տարի ժամկէտով Հայաստանի տարածքում պէտք է մնային ռուսական զօրքերը՝ թուով վեց հազար մարդ. «2000 ձիաւոր, 2000 հետեւակի եւ 2000 թնդանօթածիգ»¹²¹: Այդ զօրքերը պահելու համար Հայոց տունը կայսրութեանը տարեկան պէտք է վճարէր «60000 թուման», ըստ որում՝ այդ գումարի կէսը վճարուելու էր ոսկով ու արծաթով, իսկ կէսը՝ բնամթերքով «հաց, միս եւ գինի»¹²²: Բոլոր ամրոցները եւ զօրքը պէտք է լինէին «...ի ներքոյ հրամանի սպարապետին ռուսաց, մինչեւ ելանել նո-

117 Անդ, յօդ. 120, 103:

118 Ա.ՂԱՆԵԱՆՑ, Գ., Դիւան Հայոց պատմութեան, Գիրք Դ., Թիֆլիս 1899, Յանգուած Ա., յօդ. Ա.-Ի., 734-738:

119 Անդ, յօդ. Ա.:

120 Անդ, յօդ. ԺԶ.:

121 Անդ, յօդ. Գ.:

122 Անդ, յօդ. Է.:

ցա ի Հայաստան աշխարհե»¹²³։ Շահամիրեանը նախատեսում էր ռուսական զորքի աստիճանական վերադարձ Ռուսաստան. 10 տարի անց՝ Հայաստանից պէտք է դուրս բերուէր զորքի 1/3ը, 15 տարի անց՝ միւս 1/3 մասը, 20 տարի անց՝ ռուսական մնացած բոլոր զորամիաւորումները։ Ընդ որում՝ պէտք է նուազեցուէր զորքի համար վճարուելիք տարեկան գումարը¹²⁴։

Նախագծում սահմանուած են Ռուսաստանի նկատմամբ հայոց՝ իբրեւ երախտապարտ ազգի պարտականութիւնները. օրինակ՝ եթէ ռուսական կայսրը հրամայի զինուորագրել հայերին, Հայոց տունը պարտաւորուած է տալ մինչեւ վեց հազար զինուոր եւ «...ստանալ ծախս նոցա ի կայսրութեմէ»¹²⁵, ինչպէս Հայաստանն էր հոգալու ռուսական զորքի ծախսը՝ ըստ է. յօդուածի։ Ուշագրաւ է, որ դաշնագրում յիշատակուած է հայոց, վրաց եւ աղուանից ժողովուրդների վաղեմի բարեկամութիւնը։ Ու քանի որ ռուսական կայսեր պահանջով Հայոց տունն անհրաժեշտութեան դէպքում տրամադրելու է 6000 հայ զինուոր, ապա հայերը «...ունիցին եւս ազատութիւն օգնական լինելոյ Աղուանից եւ Վրաց որքան կարող լինիցին»¹²⁶։

Դաշնագրում սահմանուած են Հայաստանի եւ Ռուսաստանի ռազմաւախաբանական փոխյարաբերութիւնները։ Հայոց տունը պէտք է Ռուսական կայսրութիւնը ճանաչի որպէս հայերին գերութիւնից ազատող՝ մնալով բարեկամ կայսեր բարեկամներին եւ թըշնամի՝ նրա թշնամիներին։ Համապատասխանաբար՝ կայսրը նոյնպէս պէտք է «...սիրեսցէ զբարեկամս եւ ատեսցէ զքշմամիս հայոց»¹²⁷։ Հայ եւ ռուս զինուորներն ու աստիճանաւորները պէտք է պատուեն Հայաստանում եւ Ռուսաստանում։ Երկու ազգերը պէտք է յարգեն միմեանց ազգային սովորութիւններն ու հաւատը՝ «...ըստ սովորութեան իւրեանց յեկեղեցւոյ»¹²⁸։ Եթէ Հայաստանի եւ Ռուսաստանի միջեւ ծագեն խնդիրներ, վէճեր կամ տարաձայնութիւն, դրանք պէտք է քննարկուեն «Հռոմի», այսինքն՝ Գերմանիայի միապետի գլխաւորութեամբ, որպէսզի արդար վճիռ կայացուի երկու կողմի համար, եւ «...խոտվութիւնմ ու վրէժխնդրութիւնմ փակեալ»¹²⁹։

123 Անդ, յօդ. Դ.։

124 Անդ, յօդ. Զ.։

125 Անդ, յօդ. Ժ.։

126 Անդ, յօդ. ԺԷ.։

127 Անդ, յօդ. Թ.։

128 Անդ, յօդ. ԺԲ.։

129 Անդ, յօդ. Ի.։

Շ. Շահամիրեանը յոյս ունէր Հայ-ռուսական դաշնագրի միջոցով վերականգնել Հայոց պետականութիւնը, բայց, ինչպէս վկայում է պատմութիւնը, Ռուսաստանի օգնութեամբ Հայկական պետութեան վերաստեղծումն անհնար էր: Առաւել արժէքաւոր էր «Հայաստանի Սահմանադրութեան նախագիծը», որ թէեւ գործնականում չիրագործուեց Հայաստանում, սակայն այն իր փիլիսոփայական-սահմանադրական գաղափարակարգով մեծ ազդեցութիւն ունեցաւ Հայ հասարակական-քաղաքական եւ իրաւական մտքի զարգացման վրայ:

Այդպէս, ամփոփելով վերոյիշեալ մտածողների հայեցակէտերը եւ սահմանուած օրէնքները՝ յանգում ենք հետեւեալ եզրակացութիւններին:

Հայ իրաւագէտների զինուորական օրէնսդրական գործունէութեան հիմքում Հայաստանի ինքնիշխանութեան, ազգային անվտանգութեան, մարդու իրաւունքների եւ ազգային շահերի պաշտպանութեան գաղափարներն էին, որոնց իրականացումը ենթադրում էր ներազգային ուժերի համախմբում, կազմալուծուած զինուած ուժերի միաւորում, ազգային կանոնաւոր բանակի ստեղծում:

Ելնելով վերոյիշեալ խնդիրների լուծման հրամայականից՝ Հայ օրէնսգէտները ստեղծեցին եւ օտար օրէնագրքերից թարգմանաբար վերախմբագրեցին զինուորական օրէնքներ, որոնցում սահմանուած են զինուորական ծառայութեան կարգը, զօրամիաւորումների տեսակները, զինծառայողների իրաւունքներն ու պարտականութիւնները, պատերազմի եւ խաղաղութեան հիմնահարցերը, գերեզմարութեան կարգը, խաղաղ բնակչութեան անձնական եւ գոյքային իրաւունքների պաշտպանութիւնը եւ այլն:

Օրէնսգրքերում առկայ քրէաիրաւական կանոններում դատապարտում են զինուորների օրինախախտումները (դաւաճանութիւն, լրտեսութիւն, զինուորական գաղտնիքի հրապարակում, զինծառայութիւնից խուսափում, գէնքի ու զինամթերքի արտահանում, անբարոյ արարքներ եւ այլն): Նախատեսուած են պատիժներ՝ կատարուած յանցագործութիւններին համապատասխան: Գերագոյն պատիժ է սահմանուած պետութեան ու ազգի անվտանգութեանը սպառնացող զինուորական յանցագործութիւնների համար: Օրէնքներում հաստատուում է նաեւ պատիժների բարոյադաստիարակչական նշանակութիւնը:

Հայ օրէնսգէտները կարեւորում էին ոչ միայն զինուորական դասի ռազմական ունակութիւնները, այլեւ մարդկային որակներ-

րը՝ կոչ անելով գերծ մնալ բռնութիւններից ոչ միայն հայերի, այլեւ գրաւեալ տարածքների խաղաղ ազգաբնակչութեան ու գերիների նկատմամբ:

Զինուորական խրատականոններն ու օրէնքները նպաստել են հայկական բանակի կայացմանը, հայոց պետութեան ինքնիշխանութեան ամրապնդմանը, ազգային անվտանգութեան ապահովմանը, ներքին կարգուկանոնի հաստատման ու բարոյական դաստիարակութեան ծաւալմանը:

ԼԻԼԻԹ ՍԱՐՎԱԶԵԱՆ

Summary

MILITARY LEGISLATIVE CULTURE IN SOURCES ON ARMENIAN LAW

LILIT SARVAZYAN

This study analyses military laws determined by Mkhitar Gosh, Smbat the Constable, Nerses Shnorhali, Nerses of Lambron, and Shahamir Shahamiryan. Their legislative activity tends towards realising goals of Armenian sovereignty, national security, human rights, and national interests. Military laws establish the order of military service, types of military troops, the rights and obligations of military personnel, issues of war and peace, regulations of captivity, and the protection of individual and property rights of peaceful civilians. The codes contain a number of criminal and legal norms which condemn the violation of laws by military personnel, and the corresponding punishments determined for such transgressions. Armenian legislators highlight not only the capacities of various military rank, but also their human qualities. They call for avoiding violence not only against Armenians, but also against peaceful populations and hostages of occupied territories. Military laws have contributed to the reinforcement of the Armenian army, the strengthening of the sovereignty of the Armenian state, the defense of national security, the establishment of domestic order, and the expansion of moral education.